4150

Ա- տարի

491.99-8
Գ-55

Ն. 1916

wp


ԴԱՍԸՆԿԵՐ
Ա

295ա
491.99-8
Գ-55

ԿՈՎԿԱՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼԱՏՐՈՒԱԾ Է ՈՐՊԷՍ ԴԱՍԱԳԻՐՔ

ՕԴԵՍՍԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼԱՏՐՈՒԱԾ Է ՈՐՊԷՍ ԴԱՍԱԳԻՐՔ

ԿԱԶՄԵՑԻՆ
ԱՐՇԱԿ ՋԻԼԻՆԿԱՐԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆ
ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

# Ա. ՏԱՐԻ

## ԱՅԲԲԵՆԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ




Ինքնուրոյն, փոխադրած յօդուածների եւ նկարների արտատպու-
թեան իրաւունքը վերապահուած է։

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԻՊ

ԵՐԵՒԱՆ
Տպարան «ԼՈՅՍ», Բէհբուդեան փող. № 12
1916

2010

## I

### Նկարեցեք



44536-ան.

29601-63 2002



## III



Արփիկը նկարել է ուլ



Պապը լսում է Թոռնիկին



Պատկերի վրայ նկարած է սար

### ա

պաապ պ

ա պա, պա պա

աա ա

ա աա, պա պա

ա աա․ պաա․



Սարը ծածկւած է ձիւնով



Տատը գործում է



Իսահակը ձու ունի

սար — ր

պապ, սաս, պար.

պար, պա պար,

տատ — տ

տա տա,

տատ, սաս

պար պար.

ի

պա պի, ա րի

տի տի ա րա.

տա տի, սաս սար.





Արբիկը նկարում է մատիտով



Իսահակն ունի կարմիր ձու



Լամպա

Մատիտ — Մ

Մա Մի, ա րի Մի

Մատիտ տամ

տար պա պին.

կար Միր — կ

պա պիկ, Մի կապ

կար Միր Մա տիտ տար,

Մաս Մաս ա րա.

IV

լամ պա — լ

լի պա րիտ, ա րի Մի

լամ պա տար.

ա րամ, ա րի

թե լիկ տամ, տար տա տիս.



Արփիկի նկարած ուլը

ուլ **ու**

տա տի, ա սա

ու լիկ ու լիկ պու լու լիկ,

կար միր կար միր սու լու լիկ.



Նունիկը տիկնիկ է խաղում

Նու նիկ Ն

Նա նի,

մի նա մակ

տուր



պար պար սի բուն պար,

տա տիկ, ա րի լու սի կին տար.



Վանին կարդում է

վա նի

վ ւ

վա նին

լաւ

վար

արաւ

Նա տարաւ կարմիր կաւ.

վա րիր, վա րիր իմ մա րալ.

այ րիս, վա րիր իմ սի րուն.

վար տուր ար տս, իմ մա րալ.



Էմինը կոտրում է ընկոյզ

է մին է

մի էն սէ լին, էն սէ լին,

ջուր է տա նում է մի նին.

կա տուն մու կին ա սաւ,

սի րուն մու կիկ, պար արի.

վա նին է մի կին ա սաւ, տուն արի.



V

ը



Էմինի ընկուզը մեծ է

սու րէ նը լու սի կին ա սաւ.

վա՜, վա՜, մու կը, մու կը, իմ մու կը

ըն կաւ պու տու կը.



















Եւան լաց է լինում

Եւ ա ե

Ե րա նը

եր կու

եր կար

պա րան

ու նի

Ե ե ա րև ը սև սև ամ պե րի տա կն է.





Վարսիկի կատուն։

Վարսիկը ունէր

մի սև կատու.

լաւ կերակրում

էր, սիրում էր

ընկերի պէս,

Նանիկ էր ասում, պար պար անում.

Վարսիկի սև սիրունիկը սատկաւ.

Նա լալիս էր ու ասում. ո՞ւր է իմ

սիրունիկը, ո՞ւր.



Նւայի պարտէզը սիրուն է

պար տէլ

վ

վա ւէն,

ասա

վա նա վան.

արև, արև, եկ եկ,

վիվի սարին վէր եկ,

վիվի սարը, տես, տես,

պլպլում է լուսի պէս



Օնիկը բարձրանում է ծառը

Օնիկ օ.





օրօր, օրօր, իմ լալա,

երկար օրեր ունենաս.

օրօր, օրօր, արևիկ,

նանի, նանի, սիրունիկ.



Գուրգէնը նայում է Օնիկին

գուրգէն գ.

գագիկի լաւ գօտին

գազ ու կէս է.

ես գիր գրել գիտեմ,

Մի նամակ պիտի գրեմ տատիս.



Սա Մնիկի ոտն է

ոտ ո

ոսկանը ուտում է

ոսպէ սպաս.



սրտոտ գորտը.

1) Մի գորտ ընկնում է անիւի տակ և վնասւում է. ընկեր գորտերը վրա են վազում, ուզում են օգնել և ասում են. էս անիւին պիտի մի լաւ տրրորել, կոտր կոտր անել.





Մայրիկը դանակով հաց է կտրում

29601-67

դանակ դ

դանդան Մանկին
դանդանա,
դանդան կասեմ,
որ նանա.



խմասուն կովը.

անկարգ վարդգէսը ամուր կապկում է կովին. կովը ուզում է նրան սաստել.

վրա է վազում, դնում է վարդգէսին

պոչերի վրա, տանում, տալիս է

մօրը. մանուկը նոր է սկսում լալ.



Թամարի աչքերը կապած են

թամար թ

թամարը՛ թագուն մտաւ



թաթիկի պարտէզը և թութ

կերաւ. թաթիկը տեսաւ, ասաւ.

«թամար, թէ ուզում ես թութ ուտել

եկ ասա, այա կեր.»

թոն արաւ, թարաւ արաւ.

գարու արտը լաւ արաւ.

ցոլակ ց



Ցոլակն ու Բորիկէնը ձի ձի են խաղում

ցուրտ է, ցուրտ է.

տերևները ցիր ու ցան.

թոն է գալիս.

գեռը լալիս.

սիրուն օրերը անցան.



ցոլակի ակնոցը.

ցոլակն ասում է. պապա, ասում
ես ակնոցով լաւ են տեսնում.
սիրելի պապա, տուր ակնոցդ,
տեսնեմ մաման ո՞ւր է դրել
մուրաբան ու միրգը.





Բարկէնը վայր է ընկել

բարկէն բ

բզզ բզզ, բզզբզզան,
բզէզն եկաւ տզզտզզան.
ես ունիմ մէկ բերան.
մէկ բերան, ոսկի բերան.
նրանով պատմում եմ,
գրեր կապում, կարդում եմ,
լաւ բաներ ասում եմ.



Ա՜յ, ա՜յ, ես վայր ընկայ, ասում է Բարկէնը

ա՜յ, ա՜յ

այսօր մայրիկս
գնաց այգի.
ես էլ թագուն վազեցի.
ես վար ընկա, ասում է բարկէնը





Օ՜, քիթս ցաւում է, ասում է Բարկէնը

քիթ — ք

աքլոր

աքլոր, աքլոր, աքլորիկ.
կարմիր միրուք սիրունիկ.
քանի՞ այդպէս վազվզես
բակ ու այգի քանդոտես.

ղազար — ղ



Ղազարի եզներն ու ոչխարները արածում են

ղազարը աղա,
նազարը աղա,
բա մե՞ր աղունը
ո՞վ պիտի աղա.



Շուշիկն ուտում է խաղող

շուշիկ — շ

սիրելի շուշիկ

ես մի շէկլիկ շնիկ ունիմ. շուտ շուտ
շաքար եմ տալիս ուտելու, որ գամ
քեզ մօտ, շնիկս էլ կը բերեմ



Շուշիկի խաղողը հասած է

խաղող — խ

խորէն, խակ



սեխ, թթու խաղող մի ուտիր. գնա բեր
քաղցր, ալւան, սեւ ու դեղին խաղող.
Մայրիկ, ո՞րը տամ շուշիկին, ո՞րը տամ
կարիկին, պապիկին ու վարդէնին.

չամիչ — չ

չիր ու չամիչ
լաւ վաչիկին.
գիր ու գրիչ
մեր խաչիկին.



Չամիչը չորացած խաղող է

Մէկը գալիս է Մօլլի մօտ և ասում է.
-Մօլլա, այս կտորը ներկիր այնպէս, որ
ու սև՝ լինի, ու կարմիր, ու դեղին,
ու կանաչ և ու կապուտ«լաւ, ասում
է Մօլլան. Երբ գամ տանեմ»-արի
այնպիսի օր, որ լինի ու երկուշաբթի,
ու երեքշաբթի, ու չորեքշաբթի, մի
խօսքով շաբաթւա ու մի օրը.









Ջալալը ջրում է հորթին

ջուր ջ

ջալալը լիքը ցորեն,
ջալալը դրեց ջորուն,
գնաց ջաղաց, մանր աղաց.
գալիս ջորին նստեց ջրում,
ալուրն եղաւ ջրի խմոր.
մեր ջալալը մնաց մոլոր.





Ջալալի հորթը սիրուն է

հորթ հ

հայկը հնձում է.

հորոսի մանգաղը

հորոսը քաղ անելիս ոտը կոտրեց.
հորոսը գնաց շինող դարբնի մօտ
և ասաց. «տօ, տնաւեր, որ գիտէիր
քո մանգաղի հունարը կոտրելն է, էլ
ինչո՞ւ տուիր.»





Ճանճը թռչում է

ճանճ ճ

վազգէն ջան,
տես ճուտն այն խաղող'ը ուտում է



աքլոր.

ծու, ծու,

աքլորածու.

աքլոր ձնայ երևան

բուրդ բերեց,

բամբակ բերեց,

ղալ արաւ,

ղալար կարաւ.

հօպ, ծընծղիկ,

պապոնց երդիկ.



# Ծաղիկ Ծ



Սեղանի վրայ կայ մի փունջ ծաղիկ

Ծիտը ծլվլում է.

Ծի, ծի, ծի

Ծիտիկ եմ, ծիտմիտիկ եմ,

Մօր բերած եմ, հօր պահած եմ,

ապխլ նանի խաղցրած եմ.



1) Ծաղիկը բոյս է
2) Մանուշակը բոյս է

բոյս ոյ

պարոյրը ծրոզ

հետ Միսաքն

պարտէզ·ում

## Կրօնում էին.

այս ի՜նչ անուշ բոյր է գալիս.
այդ մանուշակն է հոտ տալիս.
ո՞րն է, ցոյց տուր այդ ծաղիկը,
ինձ դրեց քրոջը պարոյրիկը.
տես, նա է մանուշակը,
ծաղիկների անուշակը.
ա՜յ, այն քնքուշ թունդ կապոյտը,
ցոյց ու եց պարոյրի քոյրը.



## Ծոյլ Թեւանը

Թեւան, գնա, կալսիր.
— Օ՜, գլուխս ցաւում է.
Թեւան, եկ մածուն
կեր.
— Ո՞ւր է իմ մեծ
գդալը.



Ժամացոյցը ցոյց է տալիս ժամի ութը

## Ժամացոյց Ժ



Արջը և Ժորժիկը.
Որբ Ժորժիկը դուր-
սն էր մնացել.
Նա ցրտից դողում էր, ժաժ գալ
չէր կարող. խեղճին օգնող չկար.
Մի գոմ տեսաւ. ներս մտաւ. այն-

տեղ մի արջ կար նստած. նա երե-
խին գրկեց, տաքացրեց. ճոճիկը
ցերեկը գնում էր մուրալու, գիշերը
գալիս էր, արջի հետ ուրախ պարք-
քնում էր. մի օր տէրը տեսաւ երե-
խին արջի գրկում. խղճաց, վերցը-
րեց ճոճիկին, իր մօտ պահեց.

## կռունկներ ռ

կռո կռո կռոկռան
կռունկները հա թռան
կռունկների թևի տակ
եկաւ ամառ մեր դռան



Կռունկները կանգնած են



«բարի լոյս, գառօ ջան».
-այ բարին արևդ, քեռի խէչօ.
«ինչպէս ես, լա՞ւ ես».
-շնորհակալ եմ. բայց իմ անու-
նը գառօ չէ.
«իմն էլ խէչօ չէ»



Խելօք փիսիկը նստած է

## փիսիկ փ

միօ՜, միօ՜, փիշօ փիշօ.
-ո՞ւմ կատուն ես,
աղաբէգի.
-ի՞նչ ես ուտում.
չիր ու չամիչ.

— ո՞ւմ ես տանում.

իմ փոքրերին.

— որ գողանաս,

կը տամ գլխիդ,

միրզամ, կորի.

յատակ յ

յոգնած յակոբը յունիս, յուլիս ամիսներին պառկում է յատակի վրայ.

տղիկ յակոբը

փոքրիկ յակոբը չար տղայ էր. մի օր յասմիկ քրոջը ձեռից ինքն էլ



վայր ընկաւ յատակին և ճակա-
տը պատռեց.

— յակոբ ճակատդ էդ ինչ ես արել.

«մայրիկ, կծեցի».

— դու քո ճակատը ինչպէս կծեցիր.

«աթոռի վրայ ելայ և կծեցի».



Սեղանի վրայ դրած է ամանով ձու.

ձու ձ



ձեր սեղանին

մի աման ձու,

ձեր դռանը մի

ձիարեր ձուկ.

ձմեռ էր. երկու ձի գնային ջուր խմելու

գետը սառած էր. մէկ մէկ փորձեցին

չկարողացան սառոյցը ջարդել. ծա-

րաւից թուլացել էին. նրանք մտածե-

ցին, հնարք գտան. երկուսով մէկ

տեղ սառոյցին խփեցին. կոտրեցին,

կուշտ ջուր խմեցին.

ֆայտոն ֆ



Ֆլօրան

գնում է

ֆայտոնով.

Նունուֆարը չի ուզում ֆուրգոն

նստել.















ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ,
ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ,
ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք, և, օ, ֆ.

## VII

Տպագիր փոքրատառեր

| | | | |
|---|---|---|---|
| ա | ա | ի | ի |
| պ | պ | մ | մ |
| ս | ս | կ | կ |
| բ | բ | լ | լ |
| տ | տ | ու | ու |



կու կու լի կո՛ւ,
պստիկ-մստիկ,
կարմիր կատար,
արի՛, արի՛,
կուտիկ տար։



| | | | |
|---|---|---|---|
| ն | ն | ե | ե |
| վ | վ | զ | զ |
| է | է | օ | օ |
| ը | ը | գ | գ |
| և | և | ո | ո |
| | | դ | դ |

| | | | |
|---|---|---|---|
| թ | թ | | |
| ր | ր | ձ | ձ |
| ց | ց | խ | խ |
| ք | ք | չ | չ |
| դ | դ | այ | այ |

### վարդանը եւ ոսկանը

վարդանը գետի մոտ
ման էր գալիս, մէկ էլ գը-
լորւում, ընկնում է գետը.
վա՜, վա՜, ասում է մանուկը.
ոսկանը վազում, վարդանին
ազատում է։

—

### խաղ

—բարսեղ, սամ, թան.
—թան.
—երթաս գութան.
—սաս թուշ.
—թուշ.
—ուտես նուշ.
—սաս գրիչ.
—գրիչ.
—ուտես չիր ու չամիչ.
—սաս ցախ.
—ցախ.
—խմես քացախ



## բօբը

1.—ազատեցէք իմ որդուն կրակի բոցերից, լալով կանչում է մայրը.

ազատեցէք իմ եղբօրը, գոչում էր քոյրը և լալիս. յանկարծ մայրն ասում է շանը, բօբ. գնա, բեր թորոսին։

2. շունը վազում, մտնում է այրւող տունը, թորոսին ազատում, բերում տալիս է մօրը. բոլորը գովում են բօբին. անվախ շունը նորից վազում, մտնում է կրակը. այս անգամ դուրս է բերում մի տիկնիկ։

---

Ջ ջ
Հ հ
Ճ ճ
Ժ ժ
Ծ ծ

ջո՜ւ ջո՜ւ, ջո՜ւ ջո՜ւ, իմ հաւիկներ,
ճերմակ ճուտեր, հաւ մարիկներ,
դուք ճրտճրտան սիրուն ճտեր՝
եկէք, կերէք ձեր հատիկներ.
ժիր ծովինար, անուշ ժօրժիկ.
հայկակ, ծերուն, խորէն, ծաղիկ,
եկէք, տեսէք, ո՜ւր են հաւեր։

---





## մատների վէճը

ճկութ —ա՜յ քուրիկներ,
ջան քուրիկներ,
ես քաղցած եմ,
հաց եմ ուզում.
մատնու մատ —որ հաց չունենք,
ո՞րտեղից գտնենք.
միջին մատ —աստուած կը տայ,
մենք էլ կ'ուտենք
ցուցամատ —եթէ չտայ,
ի՞նչպէս ճարենք.
բութ —գողնանք կ'ուտենք.

հէնց որ բութն այսպէս ասաց,
բոլոր քոյրերը մէկ տեղ հաւաքուած՝
վրա տուեցին, բութին ծեծեցին,
այնպէս ծեծեցին, որ այն օրից դէս
խեղճ բութը մնաց կարճ ու սևերես։

---

Խ խ
Ոյ ոյ Ո ո
Յ յ Ձ ձ
Փ փ Ֆ ֆ

### աղան ու գիւղացին

—յարութիւն ապէր, ի՞նչ ես բերել ծախելու.
—ի՞նչ պիտի լինի գիւղացու բերածը, աղա, իւղ, պանիր, ալիւր.
—քանիսո՞վ ես ծախում.
—ի՞նչ ասեմ, աղա, թանգութիւն է. ալիւրի փութն արժէ եօթն

աքասի, իւղի փութը տասնևեօթ մանէթ.
—դէ, մի եօթը փութ ալիւր, մի փութ իւղ քաշիր, ֆուրգոնով ուղարկիր մեր տուն։

---

## պստիկ հէքեաթ

հէքեաթ, հէքեաթ պապս,
նախշուն քուռակ տակս,
հեծնեմ՝ երթամ երևան,
խաղող ուտեմ, գիրանամ,
հաւերիս կուտ բերեմ,
հաւերս ինձ հաւկիթ տան.
հաւկիթը տանեմ՝ խառատին տամ,
խառատն ինձ շիւ տայ,
շիւն տանեմ՝ հովւին տամ,
հովիւն ինձ գառ տայ,
գառը տանեմ՝ աստծուն տամ,
աստուած ինձ աղբէր տայ.
աղբէր, աղբէր, ջան աղբէր,
շաքար մաղեմ, կեր աղբէր։

## VIII.

ձեռագիր և տպագիր մեծատառեր

| | | |
|---|---|---|
| ս Ս | սՍ | Սօսի, Արամ, Պետօ, Տիրան |
| ա Ա | աԱ | |
| տ Տ | տՏ | Սօսի, Արամ, Պետօ, Տիրան գնում են ուսումնարան։ |
| պ Պ | պՊ | |





## գիրք

Ասա՛ տեսնեմ,
իմ սիրուն գիրք,
մատաղ կ'անեմ
քեզ խաղ ու միրգ.
էս ի՞նչեր կան
ծոցիդ մէջը.
ճատան մուկը
ոսկի ձուկը,
թիթեռ, բզեզ
իսկ ծաղկի պէս.
բաղն ու պուլիկ,
գառն ու ուլիկ,
կաքաւ ու լոր,
ըլոր սալոր։
դէ՜հ, շուտ պատմիր,
իմ խելօք գիրք,
մատաղ կ'անեմ
քեզ խաղ ու միրգ։

---

| | | |
|---|---|---|
| ռ Ռ | ռՌ | Ռուբէն |
| օ Օ | օՕ | Օնիկ, Օսան |
| ո Ո | ոՈ | Ոսկան |

Օսանը Ռուբէնի և Ոսկանի քոյրն է:

Ո՞վ է եփում թոնրի հացը, Ո՞վ է պահում գիւղի հօտը.
Ո՞վ է կտրում մանկան լացը. Ո՞վ է քաղում դաշտի խոտը:

---

| | | |
|---|---|---|
| ր Ր | ր Ր | Րաֆֆի |
| բ Բ | բ Բ | Բաբկէն, Բագրատ |
| ք Ք | ք Ք | Քանաքեռ, Քասախ |

## Ռուզանը

—Օգնեցէք, օգնեցէք, կանչում էր փոսի մէջ ընկած կոյր Սահակը, օգնեցէք և ինձ ազատեցէք:

Ոչ ոք ուշք չէր դարձնում: Սահակի ձայնը լսում է փոքրիկ Ռուզանը, վազում, կանչում է հայրիկին:

---

| | | |
|---|---|---|
| ի Ի | ի Ի | Իսահակ, Իշխան |
| խ Խ | խ Խ | Խաչիկ, Խորէն |
| է Է | է Է | Էմին, Էմիլ |

իսահակ, րաֆֆի, էմին, խաչիկ



## Խոզիկը

—Խոզիկ, էդ որտեղից.

—Աղայի բակից եմ գալիս.

—Ա՜յ ճրղճրղան ծուռ պոչիկ, լա՞ւ լցրիր քո փորիկ:

—Անտէր մնայ էդպէս բակ, կարգ ու կանոն հեչ չկար. շատ ման եկայ դէս ու դէն, ուտելու բան չգտայ, ամէն տեղ մաքուր էր, աղբակոյտ էլ չգտայ:



---

| | | |
|---|---|---|
| ե Ե | ե Ե | Եւա, Երևան |
| ն Ն | ն Ն | Նազիկ, Նունէ |
| հ Հ | հ Հ | Հայկ, Հրանտ |

---

## Աշուն

1

Աշուն է, նախշուն է:

—Հայրի՛կ, այսօր ես ու Նազիկը գնացինք այգի. ի՜նչ սիրուն է, ի՜նչ գեղեցիկ է այնտեղ. կարմիր-

կարմիր խնձորները, սիրուն փափլիկ դեղձերը, դեղին հոտոտ տանձերը, ալան-ալան խաղողները մարգու խելք են տանում. մենք շատ կերանք ուրախացանք։

—Այո, Նազիկ, այգիները գեղեցիկ են աշնանը. վաղն էլ գնանք բոստանները։

2

—Ա՜յ, ա՜յ, ձմերուկ, սեխ, վարունգ... ո՜րչափ շատ են գետնի վրայ տարածուած. հայրիկ, տես՝ ո՞ր մէկն ասեմ։

—Այժմ մտնենք բանջարանոց, ասաց հայրը։

—Նազիկ, մի տե՛ս, ո՜րչափ կաղամբ, գազար, տակ, բողկ են ցանած այս մարգերում. կարտոֆիլն էլ հաւաքում են.

—Հիմա էլ տեսէք, ինչպէս թռչուններից շատ շատերը շարուէշարան մեր աշխարհից գնում են, տաք երկիրներ թռչում են, ցոյց տուեց նրանց հայրը։

—

## Աշուն

Արի, աշուն, արի, նախշուն,
Արի, ու բեր շատ բարիքներ,
Հասած դեղձեր, մեծ մեծ տանձեր,
Խնձոր ու նուշ, մրգեր անուշ.
Արի, աշուն, արի նախշուն։

—



| | | |
|---|---|---|
| ժ Ժ | ժ Ժ | Ժօրժիկ |
| ծ Ծ | ծ Ծ | Ծովինար |
| թ Թ | թ Թ | Թորոս, Թադէոս |

Ժօրժիկը պարում է, Ծովինարն ու Թորոսը ծափ են տալիս։

Էն ինչն է
Թէ խօսես, կը խօսի.
Եթէ թողնես, կը քնի.
Թէկուզ ինչ էլ որ լինի,
Նա յաւիտեան չի մեռնի։

—

| | | |
|---|---|---|
| ճ Ճ | ճ Ճ | Ճանիկ, Ճորոխ |
| ձ Ձ | ձ Ձ | Ձօնիկ, Ձորագեղ |

Ձմեռ է։ Ճանապարհները ձիւնով ծածկուել են։

—

## Մուրիկի փիսիկը

—Սիրուն փիսիկ, ապա ասա, ի՞նչ է այստեղ նկարած. փիսօն նայեց, հոտ քաշեց, բան չիմացաւ, պոչը միայն ծռմռեց:

—Հը, չիմացա՞ր, մ՛յ ես անեմ. սա մի գիրք է, էս բանին էլ պատկեր կ՚ասեն, նկարել են ինձ ու քեզ:



---

Նոյեմբերին

Նոյեմբերին ցուրտ հիւսիսից
Քամին փչեց վու արաւ,
Տերևները թուփ ու ծառից
Պոկեց, քշեց ու տարաւ:

Հեռու երկրից ծերուկ պապին
Դրէս կըգայ շտապով,
Ցուպը զարկած, բուքը բերնին,
Սպիտակ սաւան փռելով:

Էն ի՞նչն է
Հանելուկ, հանմանելուկ,
Ծէրը ծաղիկ, տակն աւելուկ:



## Ձմեռ

Ձմեռ է, խիստ ցուրտ է. ձիւն է, ձիւն է ամեն տեղ, արևի տակ պսպղում, արծաթի պէս փայլում: Առուներն ու գետերը հաստ սառոյցով ծածկւել են:

—Օ՜յ, ճյ, ճյ, ի՞նչ ցուրտ է: Ձիլ գիլ քամին փըչում է. մարդ, կենդանի, նրա ձեռքից փախչում են, տաք տեղերում պահւում են:

—Մայրի՜կ, այսօր ճրչափ լաւ է.

—Իհարկէ, նոր տարի է, թռչկոտալով ձայն էր տալիս Օնիկը: Այսօր մենք շատ ուրախ ենք, նոր շորեր, նոր գրքեր, խաղալիքներ ու զարդեր ընծաներ ենք ստացել: Ստացել ենք մրգեր, քաղցր, համեղ պտուղներ:

Ի՞նչպէս լաւ է, ի՞նչ ուրախ է, չէ՞, Աստղիկ:

---

| | | |
|---|---|---|
| մ Մ | մ Մ | Մարգարիտ |
| յ Յ | յ Յ | Յակոբ |
| ց Ց | ց Ց | Ցոլակ |
| կ Կ | կ Կ | Կարդոս, Կարէն |

Մարգարիտ, Յակոբ, Կարդոս, Ցոլակ

Աշնան տերևը

Թռչում եմ, թռչում. Շուտ եկ ինձ օգնի,
Ծառի վրայից Որ ծառից իջնեմ,
Ընկերն է կանչում: Սպիտակ ու փափուկ
Քամի ջան, քամի, Վերմակով ծածկվեմ:

## Մատների խաղը

բութ — Ա՜յ, ա՜յ, գայլն եկաւ.
ցուցամատ — Ո՞րտեղից եկաւ.
միջին մատ — Տես, տես, սարից եկաւ.
մատնու մատ — Փախչենք երթանք.
— վա՜յ, վա՜յ,
Պստլիկ եմ,
Ջստլիկ եմ,
Ջուստեր չունեմ,
Ի՞նչպէս փախչեմ:





| | | |
|---|---|---|
| փ Փ | փ Փ | Փառանձեմ |
| ֆ Ֆ | ֆ Ֆ | Ֆլօրա |

Փառանձեմն ու Ֆլօրան երգում են:

| | | |
|---|---|---|
| ջ Ջ | ջ Ջ | Ջամշեան |
| ձ Ձ | ձ Ձ | Ձաբել |

Ձար Ջարիկը լալիս է:

---

## Նոր տարի

Ահա հասաւ Նոր տարի, Մանր տղայք են ուրախ,
Հետը բերաւ նոր բարի, Ունին կաղին, գոզինաղ,
Մանր տղոց ուրախ օր, Սալորի չիր, չամիչ, թուզ,
Բարի գաւակ հօրն ու մօր: Փշատ, ունապ ու ընկոյզ:

Մանր տղայք, չմոռնաք,
Աշխարհումս չէք մենակ,
Ուրիշ շատ խեղճ տղայք կան՝
Աղքատ ու անօգնական:

---

լ Լ — լ Լ — Լևոն, Լուսիկ

ը Ը — ը Ը — Ընձակ

շ Շ — շ Շ — Շուշիկ, Շողիկ

Լևոնը, Շուշիկը և Ընձակը խաղում են:

---



## Ձին ու ճնճղուկը

Ձմեռ էր ճնճղուկն եկաւ՝
խեղճ, անօթի, գոմը մտաւ.
մտաւ, թռաւ՝ մսրի ծայրին
սիրուն ձիուն՝ ծի՛ւ ծի՛ւ ասաւ։

—Ա՛յ սիրուն ձի, եղիր բարի,
Ձմեռ օր է, մի քիչ գարի,
Իմ բոի չափ, որ ինձ բաշխես,
Էլի դու միշտ կուշտ կը լինես,։
—Խեղճ ճընճըղուկ, վեր առ ու կեր
Ինչքան կուզես, ասաց մեր ձին,
Ունեցածս մեզի համար
Շատ հերիք է մինչև ամառ։

Բանն ո՛վ անէ, ես ու դու.
Հացն ո՛վ ուտէ, ես ու դու:

---



վ Վ — վ Վ — Վարդան, Վահան

ղ Ղ — ղ Ղ — Ղուկաս, Ղևոնդ

ջ Ջ — ջ Ջ — Ջալալ, Ջաւօ

Վահանը, Ղևոնդը և Ջաւօն կարդում են:

---



## Ծոյլ Խաչիկը

1. —Խաչի՛կ, ուսումնարան գնա՛։
—Մայրի՛կ, դեռ վաղ է։
—Խաչի՛կ, դասդ սովորիր։
—Օ՛, գլուխս ցաւում է։
—Խաչի՛կ, եկ հաց կեր։
—Խաղող էլ կը տաս, մայրիկ։
2. Մի օր էլ Խաչիկը գիրքը բաց արաւ, ծառի տակ նստեց։

որ դաս սովորի։ Նայեց, նայեց՝ ոչինչ չսովորեց.—Խաչիկի քունը տարաւ։

3. Մի փոքրիկ այծ մօտեցաւ նրան, պոզերով խփեց։ Քնած Խաչիկը քնից վեր թռաւ, գոռալով վազեց։

—Տեսա՞ր, Խաչիկ, այծն էլ քեզ պատժեց, ասաց մայրիկը։

| | | |
|---|---|---|
| դ Դ | դ Դ | Դաւիթ, Դանէլ |
| գ Գ | գ Գ | Գարեգին, Գրիգոր |

Դաւիթն ու Գրիգորն ընկերներ են։

---

## Ձմեռուայ գալը

Ձմեռն եկաւ, ձիւն էր հագին, ձեռն ու ոտը սառն ու սառոյց։ Ծաղիկ ծաղկունք ձիւնի տակին, հազար ափսոս, ծածկեց չորցուց։

—Ինչո՞ւ եկար, ա՛յ ծեր ձմեռ
Ու ծածկեցիր դաշտ ու անտառ.
Արդեօք չլինի՞ բան ես բերել,
Բան ես բերել դու մեզ համար։
—Մի՞թէ չգիտէք, այ մանուկներ,
Ինչ եմ բերել ես ձեզ համար.
Տաք հագուստներ ու Նոր տարի,
Միրգ ու պտուղ, չիր ու չամիչ.
Տաք փափուկ ձիւն. որ ձնէ մարդ
Կամ ձնագունդ շինէք, խաղաք.
Լաւ պաղի տաք, կապոյտ դառնաք,
Կարմիր կապոյտ դուք տուն դառնաք։



—Որ այդպէս է, բարո՛վ եկար,
Սիրուն ձմեռ, հազար բարով,
Ծերուկ ձմեռ դու մեզ համար,
Բարով եկար, հազար բարով։

---

## Ձմեռուայ զւարճութիւն

1.



—Արամ, տես, ի՞նչպէս ձիւնը փափուկ է, եկ ձնէ մարդ շինենք, ձնագնդի խաղանք, ասաց Բագրատը։

—Արի գնանք Լեւոնին էլ կանչենք։

—Կանչենք, կանչենք։

Նրանք գնացին, Լեւոնին առան, եղան երեք։

Երեքն էլ ձնագունդ շինեցին, փափուկ ձիւնի մէջ գլորեցին, մեծացրին։

—Բագրատ, տես, իմը որչափ մեծ է, էլ չեմ կարող շարժել։

—Ես էլ չեմ կարող.

—Լեւոն, եկ օգնիր, ասացին Բագրատն ու Արամը։

Երեքով Արամի գունդը գլորեցին, այնչափ մեծացրին, որ տեղից չէր շարժւում։

2.

—Տղէք, ասաց Լեւոնը, ես կը բարձրանամ մեծ գնդի վրայ, տուէք ձեր գնդերից մէկը վրան դնեմ, փոր, կուրծք և գլուխ շինեմ։

Նրանք տուին։

—Լեւոն, առ այս ածուխներն աչքերի տեղը դիր, ասաց Արամը։ Լեւոնն այդ էլ արաւ։

—Քիթը մոռացար, Լեւոն, քիթը, ասաց Բագրատը։

Ձիւն բերին, քիթ շինեցին, մի մեծ փայտ էլ ձեռքը տուին։

3.

—Բագրատ, Արամ, այժմ եկէք ձնագնդի շինենք, որ նըշան առնենք։

—Լաւ, ասացին միւսները և գործի եղան։

—Ես ձեզ առաջնորդ, ասաց Բագրատը. քանի քայլ հեռու, երբ ասեմ մէկ, երկու, երեք՝ միասին խփենք. համաձա՞յն էք։

—Հա՛, հա՛, շուտ արա։

—Պատրաստուէք, ասաց Բագրատը։

—Մէկ, երկու, երեք։ Ձնագնդով սկսեցին խփել։

—Ուռա՛... կանչեց Լևոնը, քիթը թռաւ, քիթը չկայ. որովհետև առաջ ես նշան առայ, ուրեմն ես եմ առաջնորդ։

—Լաւ, լաւ, շարունակիր, ասացին միւսները։

—Այժմ գլխին խփենք, ասաւ Լևոնը. մէկ, երկու, երեք։ Ձնագնդերը կարկտի նման թափուեցին ձնէ մարդու գլխին։

—Կեցցէ, կեցցէ... ես էլ առաջնորդ, կանչեց Արամը. տեսէք, գլխի կէսը չկայ, ինչ ծիծաղելի դարձաւ։

—Ես էլ առաջնորդ, ես էլ առաջնորդ, բղաւեց Բագրատը. ա՛յ, գլխի միւս կողմն էլ չկայ.

—Խեղճ ձնէ մարդ, էդ ինչ եղար - հա՛, հա՛, հա՛, ասացին մանուկները, կուշտ ծիծաղելով տուն գնացին։







## Ձնէ մարդ

Տղէք, տեսէք ձնէ մարդը
Փայտը ձեռին ահ է տալիս,
Բայց չի կարող մարդու զարկել։
—Ա՛յ ձնէ մարդ, դու շատ խեղճ ես,
Փայտ էլ ունես, բայց անճար ես.
Ոչ կարող ես տեղից ժաժ գալ,
Ոչ կարող ես խաղալ, ման գալ.
Սիրուն արև, մի երևար,
Թէ չէ խեղճը իւղի նման
Շուտ կը հալչի ջուր կը դառնայ։

# Գարուն

1.

Ի՞նչ սիրուն է, գեղեցի՜կ է գարունը։ Սառած երկրին, թմրած ծառերին նա կեանք է տալիս. նա կեանք է տալիս, բոյսեր բուսցնում, ծառեր, ծաղիկներ նաշխուն զարդարում։

Գարնան օրերին սարեր ու ձորեր, դաշտեր ու արտեր կանաչ են հագնում։ Սիրուն թիթեռներ, ժիր ժիր մեղուներ, գոյն գոյն թռչնիկներ ուրախ խաղում են, աշխատում, թռչում։

2.

Գարնան ժամանակ գիւղացիները դաշտ են դուրս գալիս, արտերը վարում, հատիկներ ցանում, որ ծլեն, ծաղկեն, առատ պտուղ տան։

—Իսկ ո՞վ է տեսել կանաչ դաշտի մէջ, սիրուն մարգի մէջ ոչխարի հօտեր, ուլեր գառնուկներ, ի՜նչպէս խաղում են, վազում, թռչկոտում, համեղ խոտ ուտում։



## Գարնան գալը

Գարունն եկաւ, գարունն եկաւ.
Գոգն ու ծոցը ծաղիկներով.
Որտեղ գնաց, գորգեր փռեց
Հիւսած հազար վառ գոյներով։

Որտեղ նա իր ձեռքը դրեց,
Լցրեց անուշ, քնքուշ հոտով.



Աղբիւր բղխեց նստած քարից,
Կաքաւն երգեց՝ անցած սարից։

Գարունն եկաւ, գարունն եկաւ։
Գոգն ու ծոցը ծաղիկներով։

---

## Հրաւէր գարնան

Արի՜, գարուն,
Արի՜, սիրուն,
Արի ու բեր
Նախշուն դաշտեր,
Մաքուր առւակ,
Պարզ սառնորակ,

Անթիւ հաւքեր,
Անուշ երգեր.
Գառներ, հովիւ,
Ծաղկունք անթիւ,
Ծառ ու տերև,
Պայծառ արև։



Գարի հաց, թթու թան, պանիր ուտէ, երթայ գութան։

---

## Արտուտիկ

Այ արտուտիկ,
Այուտապուտուրիկ,
Փոքրիկ թուխիկ,
Կարմրատոտիկ.

Արշալուսին
Դուլիներին
Բարի լոյս ես
Ծլվլում,

Աիրուն հանդում,
կանաչ դաշտում
Առվակի տեղ
Երգ ասում:

---



Կլորիկ, թմբլիկ.
Հասակս է պստլիկ,
Աչքերս են գեղեցիկ,
Այտերս են խնձորիկ,
Բերանս է անուշիկ,
Ո՞վ կայ ինձ պէս սիրունիկ։

## Բալենու հիւրերը

1.

Գարուն է. բալենին նոր է կանաչել, նոր է զարդարուել մանր տերևներով։ Մէկ մէկի յետևից հիւրեր են գալիս, նայում են բալենուն, ուրախանում չեն։

2.



Ամենից առաջ բալենուն հիւր են լինում թրթուրները։ Սրանք ագահ, ագահ ուտում են նրա փափուկ տերևները։ Անցնում է քիչ ժամանակ, բալենին զուգւում է սիրունիկ, սպիտակ ծաղիկներով։ Այս անգամ նրան տեսութեան են գալիս մեղուները, ծաղիկներից մեղր են ծծում։



Շաբաթներ յետոյ բալենին ծածկւում է կարմիր-կարմիր պտուղներով։ Հիմա ուրախ ուրախ հիւր են գալիս թռչուններն ու մանուկները։

---

## Ծիտն ու տղան

-Ծիտիկ միրիկ, ինչ ես այդպէս
Թռչում, ճչում, ճիկ, ճիկ, ճիկ:
Աիրուն տղայ, գարուն կը գայ,
երգով, ծաղկով անուշիկ.
Բուն եմ շինում պատի ճեղքում,
Ձագեր հանեմ սիրունիկ:

## Բկլիկ Պետիկը



Պետիկը բկլիկ էր։ Ինչ տեսնում ուտում էր. մէկ օր, երբ մայրը գործի էր, Պետիկը ծածուկ մտաւ պարտէզ և բարձրացաւ փոքրիկ սալորենու վրայ։ Պետիկը կերաւ, այնքան կերաւ խակ սալոր, որ փորը ցաւեց։

Պետիկը լաց եղաւ. մայրը վրայ հասաւ, ամեն բան հասկացաւ և բկլիկին գեղեր տուեց։ Պետիկը մի քանի օր հիւանդ պառկեց։

## Էդ մի կարծիր

—Ախպէր, ա՛յ ախպէր, կարծեմ

գիւղից ես գալիս։

—Գիւղից եմ գալիս.

—Կարծեմ քաղաք ես գնում.

—Քաղաք եմ գնում.

—Կարծեմ բեռդ մածուն է.

—Մածուն է.

—Կարծեմ էդ մածնից մի քիչ ինձ կը տաս։

—Ինչ կարծում ես կարծիր, էդ մի կարծիր, պատասխանեց գիւղացին։

## սերմիկը

Հողի մէջ հանգիստ, ձմեռն ամբողջ, ծաղիկն է քնել
Զարթնի՛ր, ասացին շողերն արևի,
Զարթնի՛ր, ասացին ցօղերն անձրևի.
Ծաղիկն էլ զարթնեց ասաց
-Ձեզ բարև, անձրև ու արև.

## Մէկ, երկու,

Մէկ, երկու, երեք,
Մէկ ճնճղուկ բերէք.
Չորս, հինգ, վեց.
Վա՜յ, ճնճղուկն ընկաւ
կոտրւեց.
Եօթն, ութը, ինը.
Ի՞նչ էր նրա գինը.
Տասը,
Ամէք մէսար։





## Պարտէզում

1.

Փոքրիկ Լուսիկն ու Ցոլակը պարտէզում քաղեցին վարդ, մանուշակ, շուշան և ուրիշ շատ ծաղիկներ։

Նրանք տեսան, որ հայրիկը ծառերը մէկ մէկ թափ է տալիս. ծառերի վրայից թափւում են շատ բզէզներ ու թրթուրներ։

—Հայրիկ, ինչո՞ւ ես դրանց վայր թափում, հարցրեց Ցոլակը։

—Եթէ բզէզները, թրթուրները ծառերի վրայ մնան, տերևներն ու պտուղները կ'ուտեն, կը փչացնեն. այն ժամանակ տանձ, խնձոր, սալոր, ծիրան և ուրիշ պտուղներ էլ չենք ունենայ, ասաց հայրը։

2.

Մէկ էլ Լուսիկը ծառի վրայ տեսաւ մի շատ գեղեցիկ թռչնիկ. սուսիկ փուսիկ մօտեցաւ ծառին և ուժով թափ տւեց, բայց թռչնիկը վայր չընկաւ։





## Ծիտիկ

Մեր պարտէզի ծառի ճեղքում
Ճընճղուկը շինեց մի բուն.
Այնտեղ ածեց երկու ձուիկ,
երկու ձուիկ, երկու ծիտիկ.
Ծիտիկներն ասին, ծի՜կ, ծի՜կ,
Մեզ կը սիրես, անուշ Մայրիկ:

## Մկան զարմանքը

Մուկը մի օր գրքում կարդաց. փիսիկի նման խելօք, աննման ուրիշ կենդանի արդեօք կը լինի՞.



Սրտիկը բարի,
Ինքը ժիր, արի,
Մուշտակը քնքո՜յշ.
Ձայնիկն անուշ.

Մուկը զարմացաւ: Սո՜ւտ է, սուտ, ասաց. փիսիկի պէս չար, կուարար ու վատ կենդանի չկայ. ա՛յ, մայրիկս վկայ:





## Նազիկ տատի խաղը



Ծափին ծափին ծիլծիլա,
Ելէք, տեսէք, ո՞վ կը գայ.
Անուշ բալէս տուն կը գայ.
Մեծ թոնիրը վառեցէք,
Կարմիր աքլոր մորթեցէք.
Թուիր, թուիր, թռցնեմ,
Աքլորի միս կերցնեմ,
Ծառի հովին քնցնեմ,
Հօրդ թևին հասցնեմ:

---

## Էս ես եմ, բա էն ո՞վ է

—Կակօ, Կակօ, մի ոչխար տար քաղաք, ծախիր, մեր բալիկների համար չիթ ու միթ բեր:

—Քաղաքում շատ մարդ կայ, բա որ փոխս ընկնեմ:

—Ա՛յ մարդ, ի՞նչ ես ասում, մարդ էլ փոխս ընկնի:

—Չէ, ես վախենում եմ. գնա՛, մի դդում բեր, մէջքիս կապիր, որ ես չփոխուեմ:

—Թող այդպէս լինի, ասում է կինը և ծիծաղելով մի մեծ դդում է կապում Կակօի գոտկից:

Կակօն գնում է:

—Էդ ո՞ւր բարով, Կակօ հարցնում է մէկը:

—Գնում եմ բազար,
Ոչխարս ծախեմ,
Երեխոց համար
Չիթ ու միթ առնեմ:

—Բա էդ դդումն ինչո՞ւ ես կապել:

—Որ փոխս չընկնեմ:

Մարդը տեսնում է, որ Կակօն խելքից պակաս է, ուզում

է գլխին մի խաղ խաղալ։ Գնում են գնում, նստում են մի աղբիւրի մօտ, հանգստանում. քիչ յետոյ Կակօի քունը տանում է։ Ընկերը սուս-փուս նրա մէջքից գօտին քանդում, իր մէջքին է կապում, ոչխարն էլ առաջը գցած՝ տանում է։ Կակօն քնից զարթնելով՝ կանչում է.—Ո՞ւր է իմ ոչխարը, ո՞ւր է իմ գօտին, ասում ու վազում է. երբ հեռուից տեսնում է էն մարդուն, ինքն իրեն ասում է.

—Հա՜, իմացայ, էն մարդը որ կայ՝ ես եմ, ես փոխս եմ ընկել. լաւ, որ էն ես եմ, բա ե՞ս ով եմ։

Թէ որ էն մարդը
Ոչխարը ծախի,
Երեխոց համար
Չիթ ու միթ առնի,
Պարզ է լուսի պէս,
Որ ես էն մարդն եմ,
Ես փոխս եմ ընկել։

Էդպէս մտածելով՝ Կակօն գնում է. Մարդն էլ ոչխարը բազարում ծախում է և մտնում է խանութ։—Հիմա հաստատ է, որ ես էն մարդն եմ, ես փոխս եմ ընկել։ Լա՛ւ, որ ես էն մարդն եմ, բա ե՞ս ով եմ. Թէ որ էն մարդը

Չիթ ու միթ առնի
Ու մեր տուն տանի,
Պարզ է լուսի պէս,
Որ ես էն մարդն եմ,
Ես փոխս եմ ընկել։

Մարդը գնում է, Կակօն էլ յետևից. մթնով հասնում են գիւղը։—Էլ կասկած չկայ, որ ես փոխուել եմ, էն մարդն ես եմ։ Լաւ, ես որ էն մարդն եմ, բա ե՞ս ով եմ, ասում է Կակօն ու դուռը ծեծում։

—Կնի՛կ, ա՛յ կնիկ, ես փոխս եմ ընկել. էն մեր տուն եկողը ես էի. մի ասա՛, տեսնեմ, էն որ ես էի, բա ե՞ս ով եմ։

Ի՞նչ մարդ, ի՞նչ բան, ասաց կինը ծիծաղելով ու ներս տարաւ մեր Կակօին։

---





## Մայիսին

Երբ մայիսին ես անցնում եմ
Կանաչազարդ անտառով,
Շատ թռչուններ ես տես-
նում եմ
Այս ու այն կողմ թռչելով։
Ես տեսնում եմ շատ ծա-
ղիկներ
Անուշ հոտով բուրելիս,
Ես տեսնում եմ թիթեռնիկներ
Միշտ վեր ու վար թռչելիս։

Գարո՜ւն է, գարո՜ւն է,
Տեսէք, ի՜նչպէս սիրուն է։
Ծաղիկներից ես կապում եմ
Սիրուն փնջեր ինձ համար,
Թիթեռների յետքից ընկած՝
Ես վազում եմ անդադար։
Ուրախ է, գարուն է,
Տեսէք, ո՜րչափ սիրուն է.
Գարուն է, նաշխուն է,
Ա՜խ, նա անչափ սիրուն է։

---

## Լաւ ընկեր

Մի փնջի մէջ,
Մեխակի մօտ,
Ընկաւ վայրի
Մի ծաղիկ,
Էն մեխակից
Առաւ լաւ հոտ,
Եղաւ հոտոտ,
Անուշիկ.

Մենք էլ եթէ լաւ ընկերներ
Էն ծաղկի պէս Ունենանք,
Խելօք, բարի
Կը դառնանք։

---

## Երեք թիթեռնիկ

Բարակ անձրև էր մաղում. երեք թիթեռնիկ՝

կարմիր, սպիտակ ու դեղին անձրևի տակ մնացին։



Դէս ու դէն ընկան, մի կակաչ տեսան, մօտեցան նրան, այսպէս խնդրեցին.



—Կակաչ, ա՛յ կակաչ, թերթիկներդ բաց արա, յոգնած ընկերներիս տեղ արա։ Տե՛ս, անձրևը մեզ թրջել է, մենք մրսում ենք, դողում ենք, մի տեղ չունինք մտնելու. դէ՛հ, շուտ արա, կարմի՛ր կակաչ, թերթիկներդ բաց արա։

—Լաւ, կարմիր թիթեռին տեղ կը տամ, իսկ դեղին, սպիտակ թիթեռին չեմ տայ։

—Իմ ընկերներից ես չեմ բաժանուի, ասաց կարմիր թիթեռը. աւելի լաւ է՝ մէկտեղ մնանք, մէկտեղ թրջուենք, մէկտեղ մեռնենք, քան թէ ես մենակ անընկեր ապրեմ։

Երեք թիթեռը հեռացան, խոտերի մէջ տեսան մի շուշան. մօտեցան նրան, այսպէս խնդրեցին.

—Շուշան, ա՛յ շուշան, թերթիկներդ բաց արա,



յոգնած ընկերներիս տեղ արա։ Տե՛ս, անձրևը մեզ թրջել է, մենք մրսում ենք, դողում ենք, մի տեղ չունինք մտնելու. դէ՛հ, շուտ արա, սպիտակ շուշան, թերթիկներդ բաց արա։



—Լաւ, սպիտակ թիթեռին տեղ կը տամ, իսկ դեղին, կարմիր թիթեռին չեմ տայ։

—Իմ ընկերներից ես չեմ բաժանուի, ասաց սպիտակ թիթեռը. աւելի լաւ է՝ մէկտեղ մնանք, մէկտեղ թրջուենք, մէկտեղ մեռնենք. քան թէ ես մենակ անընկեր ապրեմ։

Երեք թիթեռը նորից հեռացան, այս անգամ Նրանք տեսան մի նարգիզ, մօտեցան նրան, այսպէս խնդրեցին.



—Նարգիզ, ա՛յ նարգիզ, թերթիկներդ բաց արա՛, յոգնած ընկերներիս տեղ արա։ Տե՛ս, անձրևը մեզ թրջել է, մենք մրսում ենք, դողում ենք, մի տեղ չունինք մտնելու. դէ՛հ, շուտ արա, դեղին նարգիզ, թերթիկներդ բաց արա։

—Լաւ, դեղին թիթեռին տեղ կը տամ, իսկ կար-

միր, սպիտակ թիթեռին չեմ տայ։

—Իմ ընկերներից ես չեմ բաժանուի, ասաց դեղին թիթեռը. աւելի լաւ է՝ մէկտեղ մնանք, մէկտեղ թռչւենք, մէկտեղ մեռնենք, քան թէ ես մենակ անընկեր ապրեմ։

Արևը վերևից ամեն բան տեսաւ. տեսաւ ու լըսեց, երեք ընկերի սէրը հաւանեց. ամպերը քշեց, անձրևը ցրեց, երեք ընկերին նա տաքացրեց ու չորացրեց։

Խատուտիկ, պուտպուտիկ,
Թեթև թռիկ թիթեռնիկ,
Ես իմ թևով ծափ կը տամ,
Ծաղկէ ծաղիկ պար կը գամ

---



## Երկու քաջեր

Հայկն այգում
Խաղ անելիս
Յանկարծ թփում
Ի՞նչ է տեսնում.





Վա՜յ, մայրիկ ջան,
Սա ինձ կ'ուտի,
Ե՛կ, ազատիր.
Բայց ի՞նչ գազան—
Նապաստակ էր,
Որ տղային
Որսորդ կարծել,
Թփի միջին
Վախից տապել,
Ցից էր արել
Իր ականջները։
Մէկ էլ յանկարծ
Խիստ վախեցած
Մէկը մէկից
Պոկ են գալիս,
Խլշիկն անտառ,
Հայկը դէպ տուն
Լեղապատառ
Ո՞նց են փախչո՜ւմ...





## Արտույտի բույնը

1.

—Հայրիկ. այսօր արտի մէջ մի բուն տեսանք. Նրա մէջ

երեք փոքրիկ ձու կար։

—Ես էլ տեսայ, ես էլ տեսայ, ասաց Նուշիկը։

—Հայրիկ, բնի մօտ տեսանք մի արտուտիկ. նա շարունակ թռչկոտում էր, ճըլվըլում. մենք սուսիկ փուսիկ արտի մէջ կանգնեցինք մէկ էլ արտուտիկն եկաւ, իջաւ, բունը մտաւ, ձուիկների վրայ նստեց, ձայնը կտրեց։ Ասա, հայրիկ, ինչու համար նա նստեց, ինչու այդպէս ձայնը կտրեց։

2.



Հայրիկն ասաց.

—Արտուտիկը ձուի վրայ պէտք է նստի, տաքացնի, որ այնտեղից փոքրիկ ձագեր, սիրուն ձագեր դուրս գան։ Մայրը նրանց համար որդ է բերում, կերակրում, որ ձագերը շուտ մեծանան, թևեր առնեն, մօր հետ թռչեն, ուրախանան։

---

## Աղան ու մշակը

Աղան զրկեց մշակին,
Որ երթայ, արտը քաղէ.
Նա էլ պառկեց ծառի հովին.
Ասաց. թող գայ, ինքը քաղէ։

Աղան զրկեց մեծ շանը,
Որ երթայ, նրան խածէ,
Որ ելնի արտը քաղէ։



Նա էլ պառկեց ծառի հովին.
Ասաց. թող գայ, ինքը խածէ։

Աղան զրկեց սև կատուին,
Որ երթայ, շանը ճանկէ,
Որ ելնի, մշակին խածէ,
Որ ելնի, արտը քաղէ։
Նա էլ պառկեց ծառի հովին.
Ասաց. թող գայ, ինքը ճանկէ։

Աղան եկաւ, կատուին ծեծեց,
Կատուն ելաւ, շանը ճանկեց,
Շունը ելաւ, մշակին կծեց,
Մշակն ելաւ, արտը քաղեց։

---



## Ծիծեռնակի բունը

1.

Ծիծեռնակը ծըլվըլալով եկաւ հասաւ մեր երկիրը։

Ծիծեռնակն ուրախ ուրախ ամեն կողմ թռչկոտեց, անցած տարուայ բունը գտաւ, կարկատեց. բուրդ ու մամուռ, փափուկ չոր խոտ բունը բերեց, հաւաքեց, փափլիկ տաք տեղ պատրաստեց։

Մի օր էլ բնի մէջ մի ճնճղուկ տեսաւ. «Սիրուն ճընճըղուկ, այդ իմ բունն է, դուրս եկ բնիցս»։

—Ի՞նչ ես ասում, այս լաւ բնից դուրս չեմ գայ. գնա, գլխիդ ճարը տես։

2.

Ծիծեռնակը որչափ խնդրեց, աղաչեց, ճնճղուկը չլսեց. տխուր-տրտում գնաց, ընկերներին պատմեց։ Ծիծեռնակ-

ները խումբ խումբ եկան ճնճղուկին խնդրեցին, բայց ճնճղուկը չլսեց։

—Ծի՜կ, ծիկ, ծիկ, ասաց մի ծիծեռնակ. պէտք է պատժել, պէտք է պատժել չար թռչունին։

—Ծի՜կ, ծի՜կ, ծի՜կ, ասացին միւս ծիծեռնակները. պէտք է պատժել, պէտք է պատժել չար ճնճղուկին։

Նրանք թռան... Քիչ յետոյ հարիւրաւոր ծիծեռնակներ ցեխ, կաւ կտուցներն առած՝ եկան, բնի անցքը ծածկեցին, ճնճղուկին պատժեցին։

ծիծեռնակ, ծիծեռնակ,
դու-գարնան սիրուն թռչնակ,
դէպի ո՞ւր ինչ ասա,
թռչում ես այդպէս արագ:

## Ծիտիկները

—Հայրիկ, ասա, ի՞նչպէս բռնեմ,
Ի՞նչպէս բռնեմ ծիտիկները,
Սիրուն, փոքրիկ ծիտիկները։

—Հեշտ է, տղաս, մի բուռ հող առ,
Ցանիր նրանց պոչիկներին,
Դու կը բռնես ծիտիկներին,

Փոքրիկ Հայկը մի բուռ հող
Վերցրեց, ցանեց պոչիկներին,
Որ շուտ բռնէ ծիտիկներին։



Թևին տւին, թռվռալով
Թռան բարձր ծառի ծայրին
Փոքրիկ սիրուն ծիտիկները։

—Հայրի՜կ, տե՛ս, տես, թռան նրանք,
Ասա՛, ի՞նչպէս, ի՞նչպէս բռնեմ
Սիրուն, փոքրիկ ծիտիկներին։

—Հիմա նրանց դու հանգիստ թող,
Քեզնից նրանք շատ խելօք են՝
Փոքրիկ, սիրուն ծիտիկները։



## Զանկլօ Պանկլօ

### 1.

Լինում է չի լինում, մի այծ է լինում. այս այծն ունենում է երկու փոքրիկ սիրուն ուլիկ, մէկի անունը Զանկլօ, միւսինը Պանկլօ։

Մայրն ամեն օր գնում արածում, ուլիկների համար կաթ էր պատրաստում։

—Մայրիկ, մեզ էլ տար անտառ, մենք էլ ուզում ենք արածել, ծաղիկներ ուտել, սառը ջուր խմել, ասացին ուլիկները։

—Դուք փոքր էք, պատասխանեց մայրը, մի քիչ էլ տանը մնացէք, մի փոքր էլ մեծացէք, յետոյ կը տանեմ։

ները խումբ խումբ եկան ճնճղուկին խնդրեցին, բայց ճնճղուկը չլսեց։

—Ծի՜կ, ծիկ, ծիկ, ասաց մի ծիծեռնակ. պէտք է պատժել, պէտք է պատժել չար Թռչունին։

—Ծի՛կ, ծի՛կ, ծի՛կ, ասացին միւս ծիծեռնակները. պէտք է պատժել, պէտք է պատժել չար ճնճղուկին։

Նրանք Թռան... Քիչ յետոյ հարիւրաւոր ծիծեռնակներ ցեխ, կաւ կտուցներն առած՝ եկան, բնի անցքը ծածկեցին, ճնճղուկին պատժեցին։

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
դու-գարնան սիրուն թռչնակ,
դէպի ո՞ւր ինչ ասա,
թռչում ես այդպէս արագ:

---

## Ծիտիկները

—Հայրիկ, ասա, ի՞նչպէս բռնեմ,
Ի՞նչպէս բռնեմ ծիտիկները,
Սիրուն, փոքրիկ ծիտիկները։

—Հեշտ է, տղաս, մի բուռ հող առ,
Ցանիր նրանց պոչիկներին,
Դու կը բռնես ծիտիկներին,

Փոքրիկ Հայկը մի բուռ հող
Վերցրեց, ցանեց պոչիկներին,
Որ շուտ բռնէ ծիտիկներին։



Թևին տւին, Թռվռալով
Թռան բարձր ծառի ծայրին
Փոքրիկ սիրուն ծիտիկները։

—Հայրի՛կ, տե՛ս, տես, Թռան նրանք,
Ասա՛, ի՞նչպէս, ի՞նչպէս բռնեմ
Սիրուն, փոքրիկ ծիտիկներին։

—Հիմա նրանց դու հանգիստ Թող,
Քեզնից նրանք շատ խելօք են՝
Փոքրիկ, սիրուն ծիտիկները։

---



## Ջանկլօ Պանկլօ

1.

Լինում է չի լինում, մի այծ է լինում. այս այծն ունենում է երկու փոքրիկ սիրուն ուլիկ, մէկի անունը Ջանկլօ, միւսինը Պանկլօ։

Մայրն ամէն օր գնում արածում, ուլիկների համար կաԹ էր պատրաստում։

—Մայրիկ, մեզ էլ տար անտառ, մենք էլ ուզում ենք արածել, ծաղիկներ ուտել, սառը ջուր խմել, ասացին ուլիկները։

—Դուք փոքր էք, պատասխանեց մայրը, մի քիչ էլ տանը մնացէք, մի փոքր էլ մեծացէք, յետոյ կը տանեմ.

—Որ այդպես է, մեզ համար փափուկ խոտ և սառը ջուր բեր անտառից։

—Շատ լավ, ասաց մայրը. նա ամեն օր Զանկլո Պանկլոի համար խոտ, սառը ջուր և անուշ կաթ էր բերում։

Ամեն օր անտառ գնալիս՝ մայրն ասում էր.—Զանկլո Պանկլո ուլիկներ, դուռը փակ պահեցէք, թե չէ՝ չար գայլը կը գայ և ձեզ կը տանի։

Երբ մայրը տուն էր վերադառնում, պոզերով դուռը ծեծում էր, բարակ ձայնով երգում և ասում էր.

Զանկլո, Պանկլո ուլիկներ,
իմ սիրունիկ բալիկներ,
եկէք, դուռը բաց արէք,
կերէք, խմէք, կշտացէք:

Ես ձեզ համար լիուլի
Կաթ եմ բերել իւղալի,
Խոտ եմ բերել հիւթալի,
Ջուր եմ բերել աղբիւրի։

Զանկլոն ու Պանկլոն վազում, դուռը բաց էին անում, կաթը ծծում, խոտն ուտում, ջուրը խմում, կշտանում էին։

2.

Մի գայլ այս բանը տեսնում է. նա մտածում է ուլիկներին ուտել. մի օր, երբ այծը տանը չի լինում, մոտենում է տնակին, դուռը ծեծում և երգելով ասում է.

Զանկլո, Պանկլո ուլիկներ,
Իմ սիրունիկ բալիկներ,
Եկէք դուռը բաց արէք,
Կերէք, խմէք, կշտացէք.



Ես ձեզ համար լիուլի
Կաթ եմ բերել իւղալի,
Խոտ եմ բերել հիւթալի,
Ջուր եմ բերել աղբիւրի.

—Դու մեր մայրը չես, մեր մայրը բարակ ձայն ունի, քո ձայնը հաստ է, ասացին ուլիկները։

Քիչ յետոյ գայլը նորից մոտեցաւ այծի տնակին։ Այս անգամ բարակ ձայնով երգեց, որ դուռը բանան։

—Մեր մօր ոտները սպիտակ են, քո ոտները սև են, դու մեր մայրը չես, դուռը բաց չենք անի։

Գայլը վազեց, գնաց ջրաղաց ոտներն ալիւրով սպիտակացրեց, կրկին եկաւ, դուռը ծեծեց և շատ բարակ ձայնով երգեց, որ դուռը բաց անեն։

Այս անգամ Զանկլոն ու Պանկլոն դուռը բաց արին, բայց երբ գայլին տեսան, շատ շատ վախեցան։ գայլն երկուսին էլ կուլ տւեց, գնաց։

3.

Մայրը տուն դարձաւ. երբ նա տնակի դուռը բաց տեսաւ, սաստիկ վախեցաւ, դէս ու դէն ընկաւ, շատ ման եկաւ, ուլիկներին չգտաւ։



—Այն գայլն է ուլիկներիս խաբել ու տարել, պէտք է չար գայլին պատժեմ, պէտք է ուլիկներիս ազատեմ։

Այծը մտածեց, մտածեց, հնարը գտաւ. նա մի աման սեր առաւ, մի աման մածուն, գնաց դարբնի մօտ և ասաց.

—Դարբին, ա՜յ դարբին, ես քեզ համար սեր ու մածուն եմ բերել, ի՞նչ կը լինի՝ իմ

պոզերը լաւ սրես, որ չար գայլի հետ կռուեմ, Ջանկլօ, Պանկլօ ուլիկներիս ազատեմ։

Դարբինն այծի պոզերը դանակի պէս լաւ սրեց։

Այծը գնաց գայլի տան կտուրը քանդեց։

Գայլը բարկացած կանչեց։ Ո՞վ է իմ կտուրը քանդում։

Ես եմ քանդում, ասաց այծը. սամ տեսնեմ, դո՞ւ ես տարել իմ Ջանկլօին, դո՞ւ ես տարել իմ Պանկլօին, թէ որ քաջ ես, դուրս եկ, կռուենք։



—Ես եմ տարել—կերել քո Ջանկլօին ու Պանկլօին, ես դուրս կը գամ կռուելու, ասաց գայլը,

Նրանք կռուեցին. այծը սուր սուր պոզերով խփեց, գայլի փորը պատռեց։ Գայլը վայր ընկաւ, Ջանկլօն ու Պանկլօն ուրախ ուրախ դուրս թռան։

---





## Մկնիկ աղան

Երկարպոչ մկնիկ աղան ուզեց ընկեր գտնել իրան։



Հագաւ իր նոր շապիկը, չուխան, ելաւ բռնեց վերի ճամբան։ Գնաց, գնաց, հասաւ մի մեծ ճահիճի։ Էս ճահճի մօտ, մի կանաչ գորտ կըռկռալով երգ էր ասում։

Մկնիկ աղան հաւնեց սրան, բարև տւաւ, բարև առաւ, բարակ ձայնով նրան ասաւ.

—Է՜յ սիրունիկ,
Հաստլիկ տոտիկ,
Նաշխուն գորտիկ,
Արի, անեմ քեզ ինձ հարսիկ։

Գորտն ասաց.—Չէ, պստլիկ, երկարպոչիկ, աղա մկնիկ, ես չեմ դառնայ քեզի հարսիկ։

Մկնիկ աղան շատ էր հաւնել խանում գորտին ու դու տւաւ ճարտար լեզուին.

—Ահա աշուն,
Դու էլ անտուն.
Ձիւնը կը գայ
Փուլայ-փուլայ,

Բուք ու բորան,
Խանում կըռռան,
Բա դու մեղք չե՞ս,
Ինչո՞ւ սառչես։

Խանում-խաթուն գորտը կըռռան, որ միտ բերաւ ցուրտը ձմրան, նրան ասաւ.

—Մկնիկ աղա,
Ասենք՝ եկայ.
Տուն, տեղ ունե՞ս,
Որ կը տանես։

Լաւ ու համեղ
Ճանճ ու մժեղ,
Շորեր պէս պէս
Դու կը բերե՞ս։

—Բա չե՞մ բերի
Տունս կոկլիկ,
Հազար բարիք

Մէջը լեցուն,
Խանում խաթուն
Նախիր ու կեր։

2.

Մկնիկ փեսան տլապ-տլապ, հարսը կըռռան չլոփ-չլոփ, եկան, եկան, նորափեսի տունը հասան։ Էստեղ կարգին հարսնիք արին. աշուղները սազ ու տաղով հարս ու փեսի գովքն արին ու եօթն օր, եօթը գիշեր, մկնիկ աղին հարսնիք արին։ Շատ օր չանցած մկնիկ փեսան հարսին ասաւ.

—Հարևանի          Խանում գորտիկ
Որդին ունի          Ես կը գնամ,
Էս օր հարսնիք.          Շուտ կը դառնամ:

Մի օր, երկու, երեք անցաւ, մկնիկ աղան տուն չդարձաւ, Հարսն էլ դարձաւ իր ճահիճը, սրտի ցաւից նա երգ կապեց, տխուր ձայնով այսպէս երգեց.

—Էս աշխարհում          Մկնիկ փեսայ,
Չեմ հաւատում          Բա աշխարհի
Ես ընկերի:          Օրէ՞նք է սա:

Էս որ լսեց մկնիկ աղան, իսկոյն գնաց գորտի մօտը, ինչքան խնդրեց, լեզու թափեց, գորտը նրան հէչ չլսեց: Եւ մկնիկը տխուր, տրտում վերադարձաւ մենակ իր բուն:

## Փոքրիկը

—Մայրիկ, մայրիկ, ինձ ասա,          —Դու երկնքից ցած թռար,
Ես ի՞նչպէս աշխարհ եկայ:          —Թռար ու գիրկս ընկար:

Մօր երեսին բարկացկոտ
Նայեց փոքրիկն ու ասաւ.
—Եթէ թևեր ունէի,
Ափսոս չէ՞ր որ կտրեցիր:

## Կառապան

—Կառապա՛ն, ա՜յ կառապան,
Հագել ես կարմիր կապան,
Կառքիդ ի՞նչ ես լծել դու:
—Երկու շնիկ, մի կատու.
—Ո՞ւր ես վազում ջրի նման.
—Դէպի՛, դէպի՛ Երևան,
Խաղող ուտեմ, գիրանամ:









## Հպարտ աքլորը

Բակում մի օր
Երկու աքլոր
Կերի համար կռւեցին
Իրար փետուր,
Կատար, բմբուլ
Արնոտեցին, գզեցին:
Մէկը վերջում
Յաղթւած, տրտում
Փախաւ, գոմում թաղնւեց.
Մէկն էլ ուրախ,
Հպարտ, անվախ
Ելաւ կտուրն ու ձայնեց.
—Կի... կի... լի... կի՜...
Այս աշխարհքի
Հաւքերի մէջ ինձ նման
—Ո՞վ կայ, տեսնեմ...
Ես իշխան եմ
Անվախ, անյաղթ, աննման:
Հարևանի քաջ, անւանի,
Մեծ աքլորին յաղթեցի,
Բմբուլն ալւան,
Ցարդի նման,
Քամու բերան տւեցի.
Կի... կի... լի... կի՜...
Այս միջոցին հսկայ մի ցին
Նրան տեսաւ, սլացաւ,
Մագիլները լայն բացած,
Ու աքլորին՝ քաջ իշխանին,
Ճանկերի մէջ տարաւ վեր,
Ձագուկներին արաւ կեր:



## Պոչատ կաչաղակը

1.

Լինում է չի լինում, մի պառավ տատիկ է լինում, տատիկը մի այծ է ունենում. նա ամեն օր կթում, թոռնիկներին կերակրում էր։ Մի օր էլ կաթը դրեց ծառի տակը, ինքը գնաց փայտ բերելու, որ կերակուր պատրաստէ։

Այս բանը կաչաղակը տեսաւ. նա թռաւ կանգնեցամանի վրայ ու կաթը թափեց։ Պառաւը բարկացաւ, ձեռքի փայտով խփեց կաչաղակին, պոչը կտրեց։

2.

Կաչաղակը թռաւ կանգնեց ծառին ու ասաց.

—Տատիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

Պառաւն ասաց —Գնա կաթս բեր, որ պոչդ տամ։

Կաչաղակը թռաւ գնաց կովի մօտ և ասաց.

—Կովիկ, կովիկ, կաթ տուր, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը իմ պոչս տայ, կցեմ կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

Կովն ասաց։

—Գնա, ինձ համար խոտ բեր, որ քեզ կաթ տամ,

Կաչաղակը թռաւ գնաց արտի մօտ և ասաց.



—Արտ, արտ, ինձ խոտ տուր, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ, կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

Արտն ասաց. —Գնա ինձ համար ջուր բեր։

Կաչաղակը թռաւ գնաց ջրբաշխի մօտ և ասաց։

—Ջրբաշխ; ջրբաշխ, ինձ ջուր տուր, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ, կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

—Ջրբաշխն ասաց.—Գնա ինձ համար բահ բեր։

Կաչաղակը թռաւ գնաց դարբնի մօտ և ասաց.

—Դարբին, դարբին, ինձ բահ տուր, բահը տանեմ ջրբաշխին, ջրբաշխն ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ, կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

Դարբինն ասաց.—գնա ինձ համար ձու բեր.

Կաչաղակը թռաւ գնաց հաւի մօտ և ասաց.

—Հաւիկ, հաւիկ, ինձ ձու տուր, ձուն տանեմ դարբնին տամ, դարբինն ինձ բահ տայ, բահը տանեմ ջրբաշխին, ջրբաշխն ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտն ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովն ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչս տայ, կցեմ, կցմցեմ, պոչս սաղացնեմ, երթամ ընկերներիս հասնեմ, որ չասեն՝ պոչատ մոչատ կաչաղակն եկաւ։

Հաւը խղճաց նրան, մի ձու տուեց։

Կաչաղակը շատ ուրախացաւ. ձուն տարաւ դարբնին, դարբինը նրան բահ տուեց. բահը տարաւ ջրբաշխին, ջրբաշխը նրան ջուր տուեց. ջուրը տարաւ արտին, արտը նրան խոտ տուեց. խոտը տարաւ կովին, կովը նրան կաթ տուեց. կաթը տարաւ պառաւին, պառաւը նրան պոչը տուեց. կցեց, կցմցեց, պոչը սաղացրեց, գնաց ընկերներին հասաւ։

## Ամառ

Շոգ է, ամեն տեղ կրակ է թափւում. մարդիկ, կենդանիներ փախչում, մտնում են հով տեղեր։

Այգիների մէջ հասնում են տեսակ տեսակ քաղցր, համեղ ծիրաններ, կարմրաթշիկ կեռասներ, տանձեր, խնձորներ և ուրիշ պտուղներ։ Բոստաններում հասնում են ձմերուկներ, սեխեր, վարունգներ և շատ տեսակ բանջարներ։

Արտերում դեղնում, հասնում են ցորեն, գարի, հաճար և ուրիշ հացահատիկներ։ Գիւղացին շատ ուրախ է, դուրս է գալիս դաշտ, արիւն քրտինք է թափում, հունձ է անում, բարդ բարդում, մեծ սայլերով կալը բերում, ծեծում է, ձմեռուայ պաշար պատրաստում։

---

## Ամառ

Սաստիկ շոգ է, ցորեն, գարի հասել են,
Հնձողները խոտը քաղել դիզել են,
Բոլոր ծառերը ծածկւել են տերևով,
Պտուղները ճիթ են անում ժպտալով.

Ամառ է, ամառ է,
Արևը խիստ կը վառէ։





## Զմրուխտ եղնակ

«Զմրուխտ եղնակ, ոսկի՛ եղնակ,
Զարկի՛ր, խաղանք միասին»։
—Ի՞նչպէս խաղանք, սիրուն հարսիկ,
Ճաշ ես տանում Մինասին։
«Մինասը թող իր հունձն անի,
Զառ թևերդ դու զարկի՛ր»։

Եղնակն օդում խաղ է անում,
Հարսի գլխով պտըտւում.
Հարսն ուզում է նրան բռնել,
Տի՛-նի՛-նի՛-նի՛ վազվզում։

Օրը մթնեց, հնձւոր Մինաս
Սոված մնաց դաշտումը.
Խեղճ երեխան լացից ճաքեց,
Խմորը քացխեց տաշտումը։

---



## Արագիլի սերը

Արագիլի բունը տան կտրին էր։ Նրա բնի մէջ կային երկու փոքրիկ ձագ. Նրանք նոր էին փորձեր անում, որ թռչեն։ Մի օր էլ տունը կրակ ընկաւ. հրդեհը շատ մեծացաւ, չկարողացան հանգցնել։

Արագիլը շատ վախեցաւ, վեր ու վար թռաւ, օգնութիւն կանչեց։ Քանի՛ քանի անգամ փորձեց ձագերին բերանն առնել, բնից փախցնել, կրակից ազատել։

Այս բանը նրան չյաջողուեց ու չյաջողուեց։

Երբ տեսաւ, որ էլ ճար չկայ, թևերը փռեց ձագերի վրայ, ուզեց պաշտպանել։ Կրակի բոցերը վերև բարձրացան Արագիլն իւր ձագերի հետ միասին այրուեց։

---

## Չղջիկ

1.

—Բարև ձեզ, թռչնիկներ, ես ուզում եմ ձեզ հետ ապրել, ասաց չղջիկը։

—Դու ո՞վ ես, ասաց մի թռչնիկ։

—Դու մեզնից չես, ասաց մի ուրիշը։

—Որ ձեզնից չեմ, ապա ինչպէս ձեզ պէս թռչում եմ, ասաց չղջիկը։



Թռչնիկները զարմացան։

—Նա մեզնից է, ասաց մէկը։

—Նա մեզնից չէ, պնդեց միւսը։

Թռչնիկների մէջ կռիւ ընկաւ։

Մի խելօք ծիտ էլ չղջիկին ասաց.

—Եթէ ուզում ես մեզ հետ ապրել, պէտք է հարկ տաս։

Չղջիկը բարկացաւ, հեռացաւ գնաց։

2.

Այս անգամ չղջիկը գնաց մկների մօտ և ասաց.

—Բարև ձեզ, քոյրիկներ, ես ուզում եմ ձեզ հետ ապրել։



—Դու ո՞վ ես, հարցրեց մի մուկ։

—Դու մեզնից չես, ասաց մի ուրիշը։

—Որ ձեզնից չեմ, ապա ինչո՞ւ ձեզ նման քիթ ու բերան ունիմ, ասաց չղջիկը։



—Նա մեզնից է ասաց մէկը։

—Նա մեզնից չէ, պնդեց միւսը։

Մկների մէջ կռիւ ընկաւ։

Մի մուկ էլ չղջիկին ասաց.

—Եթէ ուզում ես մեզ հետ ապրել, պէտք է հարկ տաս։

Չղջիկը բարկացաւ, հեռացաւ, գնաց։

3.

Այն օրից դէսը մութ քարերի մէջ, ծառերի ճեղքում Նա մենակ ապրեց, նա մենակ ապրեց, որ էլ հարկ չտայ։ Նա ցերեկները քնում է, գիշերները դուրս գալիս, իր համար որս ճարում։

Էն ինչն է՝

Թևեր ունի, փետուր չունի,
Բայց թռչում է, ինչպէս թռչուն.
Կտուց չունի թռչնի պէս,
Բերան ունի մկի պէս.

---

## Պստիկն ու լստիկը

Դաշտի մուկը հսկայ ու չաղ
Ագին երկար, ինքը ղօչաղ,
Մօտենալով մի օր մի տան,
Տեսաւ փոքր պստիկ մկան.
«Պա՜հ, քո տունը Աստուած շինի,
Էդպէս պստիկ մուկ կը լինի՞…
Էդքան նիհար, հալից ընկած
Աշխարհումս դեռ չի եղած»։
—Հարուստ տան մէջ տաք ամբարում
Թագաւորի կեանք ես վարում.
Ուտում ես միշտ կարագ ու եղ,
Կրծում շաքար ու նուշ համեղ։
Իսկ ես խոպան, ցուրտ դաշտերում

Հազիւ հազ եմ ապրուստ ճարում.
Բայց տես, քեզնից մեծ եմ, հսկայ,
Ինձ պէս լխտիկ՝ էլ մուկ չկայ...»—
«Մի պարծենար, իմ աչքի լիս,
Մէկ նայիր, թէ ո՞վ է գալիս»։
Նայեց էն կողմ դաշտի մուկը,
Տեսաւ կատուին, ցամքեց թուքը։
Պստիկ մուկն իսկոյն փախաւ,
Իր նեղ բնում շուտ թաք կացաւ.
Շատ աշխատեց լխտիկ մուկն էլ,
Բայց չկարաց ծակը մտնել։
Կատուն վազեց կաղլիկ-կաղլիկ,
Բռնեց դաշտի մըկան չաղլիկ։
«Բաջի, կանչեց տան մկնիկը,
Պստիկն է լաւ, թէ լխտիկը...»

## Երեխաները անտառում

1.

—Ի՞նչ կայ դպրոցում, անտառում լաւ է, գնանք այնտեղ խաղանք, տանձ ու խնձոր քաղենք, ասաց մի աշակերտ իր երկու ընկերներին։

Գնանք, գնանք, ասացին միւսները և երեքով միասին գնացին անտառ։

—Սիրուն բզէզներ, ճանճեր, եկէք՝ խաղանք, ասացին մանուկները։

—Մենք շտապում ենք, յայտնեցին ճանճերը։

—Մենք էլ ազատ չենք, ասացին բզէզները։

Աշուն է, տաք տեղ ենք փնտռում, որ մենք չմրսենք, իսկ մեր ձուերը ցրտից չսառչեն։

Մանուկները գնացին. ծառերի միջից մի ձայն լսեցին։



—Բարե՜ւ քեզ, բարե՜ւ, սիրելի Թռչնիկ. երգիր մեզ համար. եկ ներքեւ, խաղանք։

—Ես շատ գործ ունիմ, ժամանակ չունիմ։

2.

Երեխաները գնացին. գնացին, գնացին, մի խումբ մրջիւններ տեսան։

—Փոքրիկ մրջիւններ, եկէք, քիչ խաղանք։

—Չէ՞ք տեսնում, ձմեռւայ համար պաշար ենք հաւաքում, ասացին մրջիւնները։



Մանուկները քիչ էլ գնացին, ծառերի վրայ սկիւռներ տեսան։

—Փափլիկ սկիւռներ, ներքեւ եկէք, մի փոքր խաղանք։

—Չէ՞ք տեսնում, որ մենք պաշար ենք հաւաքում ձմեռւայ համար կերակուր պատրաստում։

—Եկէք, աղէք, առւակի հետ խաղանք։

—Ժամանակ չունիմ ձեզ հետ խաղալու. բոյսեր, ծառ ու ծաղիկներ ինձ են սպասում։ Ինձ են սպասում այծ ու ոչխարներ, գառներ, ուլիկներ, որ անուշ ջրիցս խմեն, զովանան։

Մանուկները զարմացան, թէ ինչու ոչ ոք չի ուզում իրենց հետ խաղալ։

Յանկարծ՝ ծառերի միջից մի փոքրիկ կկու բարձր կանչեց.—Կո՜ւ-կո՜ւ, կո՜ւ-կո՜ւ.



Ես փոքրիկ եմ, բայց ծոյլ չեմ,
Ամեն օր էլ աշխատում եմ
Եւ միշտ ուրախ խաղում եմ։

Լայպցիգում յայտնի Բրօկհաուզի վիմագրատանը պատւիրած և արդէն պատրաստի Գունաւոր պատկերները ներկայ համաեւրոպական պատերազմի սկզբին հասան ու մնացին Ռուս-Գերմանական սահմանագլխում գտնւող Ալէքսանդրօվօ կայարանում, որտեղից մինչև օրս անհնարին եղաւ ստանալ։

Ուստի այս հրատարակութիւնը մեր ցանկութեան հակառակ լոյս է տեսնում առանց գունաւոր պատկերների։

---

## ՆԱԽԱԲԱՆ

Չնայելով դասընկերն իր լոյս տեսած օրից (1909 թ.) մամուլում և ժողովներում խիստ և երբեմն միակողմանի քննադատութեան ենթարկւեց. չնայելով նրա առաջարկած նորութիւնների մասին ոչ ոք ըստ էութեան չխօսեց ու չհերքեց և ոմանց կարծիքով դրանք աւելորդ նորութիւններ համարւեցին, բայց և այնպէս Դասընկերի կազմողները հիմնւելով գիտութեան և իրենց տարիների փորձերի վրայ՝ անշեղ կիրառելով իրենց առաջարկները առաջ տարան և հետզհետէ լրացրին։

Դասընկերի գործածողները տարիների ընթացքում գործնականի մէջ համոզւեցին, որ մեր առաջարկները (չորս գծի փոխարէն մի գծի գործածել, թէք գրութեան տեղ ընդունել ուղղահայեաց, բոլոր այբբենը ձեռագրով տանել, ձեռագրից գիտակցական արտագրութիւնը ճանաչել որպէս ամենալաւ միջոց ուղղագրութեան, մեծ ու փոքր տառերը առանձին առանձին անցնել և այլն) իսկապէս գիտական և գործնական հիմունքներ ունեն և մեր բռնած ճանապարհը ուղիղ է ու նպատակայարմար։

Դրան ապացոյց կարող են լինել Դասընկերի տարէցտարի տարածւելը և այն նոր դասագրքերը, որոնք Դասընկերի լոյս տեսնելուց մի քանի տարի յետոյ հրապարակ եկան, ինչպէս «Մեր Դպրոցը» և «Կայծեր».

Այդ կողմից Կայծերի կազմողները այնչափ առաջ են գնացել, որ ոչ միայն Դասընկերին հետևել և նրա սիստէմից օգտւել են, այլ և առանց յայտնելու նոյնութեամբ ընդօրինակել են Դասընկերի մանր և մեծատառ ձեռագրերը։ Պէտք է Կայծերի կազմողներն 'ի նկատի ունենային, որ այդ տառերն առանց փորձերի ու նիւթական զոհողութեան առաջ չեն եկել. ուստի և այդ վարմունքի համար յայտնում ենք մեր զարմանքն ու բողոքը։

Դասընկերի առաջին հրատարակութեան մէջ մենք շեշտել էինք, որ ամէն կերպ խուսափել ենք օրինակելի բառերի համար ընտրել կենդանիների, գործիքների և այլ առարկաների անուններ, որոնք մանուկների համար կրկնակի դժւարութիւն են առաջ բերում (տես համառօտ բացատրութիւն գործադրողներին, VII աստիճան). այդ հիման վրայ օրինակելի բառերի մեծ մասը վեր է առած ընտանիքի պատկերից։



# ՀԱՄԱՌՕՏ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԴՐՈՂՆԵՐԻՆ

*(Վերջաբան Ա. տպագրութեան 1909 թ.)*

I. Արդէն էքսպէրիմենտալ մանկավարժութիւնը բազմաթիւ փորձերով ապացուցել է, որ ձեռագրից արտագրելն երկու անգամ պակաս սխալներ է տալիս, քան տպագրից արտագրելը։ Հոգեբանօրէն նոյնպէս ապացուցւած է, որ ձեռագրով գրել-կարդալ սովորեցնելն անհամեմատ աւելի արագ և յաջող արդիւնք է տալիս, քան տպագրով։ Այստեղ մանուկն իր բնական հակումների համաձայն նախ գրում, ապա գրածը կարդում է։ Մանուկը գործ ունենալով միմիայն մի բանի (ձեռագրի) հետ, նրա հոգու մէջ արագ զուգորդւում է, դրա համար նա աւելի շուտ ըմբռնում է, հեշտութեամբ վարժւում, առաջ է գնում, քան երբ նրան ձեռագրի հետ միասին տալիս են տպագրերը։ Ձեռագիրը որչափ էլ նման լինի տպագրին, այնուամենայնիւ չի կարելի միացած տանել, որովհետև մանկանը դժւարութիւն է պատճառում. իսկ երբ սրա հետ միացած են տանում ձեռագիր և տպագիր գլխատառերը՝ խնդիրն անհամեմատ աւելի ու աւելի բարդանում է։ Այստեղ մանկան հոգին ոչ թէ միայն տառի մի ձևի հետ գործ ունի, այլ չորս—(ձեռագիր, տպագիր, մանր տառեր և մեծատառ ձեռագիր և տպագիր)—ձևեր՝ որոնք իրարուց բաւական խիստ տարբեր լինելով, մատաղ հոգու համար անմարս են մնում և իւրացումն չի կարող լինել։ Զարմանալի հակասութիւն է տիրում մեր մէջ։ Եւրոպական և ամերիկական շատ երկրներում, որտեղ մանուկն երեք տարի մանկապարտէզ յաճախելով ահագին մտապաշար, մտքի վարժութիւն, ըմբռնողութեան ընդունակութիւն է ձեռք բերում և այս ամենից յետոյ պահանջ են դնում դպրոց մտնող մանկան Ա. տարում գրել կարդալ չսովորեցնել, այլ զարգացնել գգայարանները վարժեցնել և միայն Բ. տարւանից սկսել,— իսկ մեզնում որ այդպիսի պայմաններ չկան, այլ և շատ անգամ մանկանը, նոյնիսկ ամենախեղճուկ ընտանիքի յարկի տակից դուրս եկած, Ա. տարում ոչ միայն գրել կարդալ են սովորեցնում, այլ և խիստ դժւարին պահանջներ դնում՝ միաժամանակ և ամէն մի տառ սովորելու համար պահանջելով չորս ձև։ Ո՞րպիսի հակասութիւն։ Իւրաքանչիւր գիտող դասատու բազմաթիւ փորձերով կարող է տեսնել, որ այդպիսի դէպքերում մանուկները գրելիս շատ անգամ մեծ ու փոքր տառերը շփոթում են միմիանց հետ և գրել-կարդալու գործը դանդաղեցնում, դժւարացնում են։ Տպագիր և ձեռագիր փոքր ու մեծ տառերն իրար հետ անցնելիս մանուկների ուշադրութիւնը ցրւում է, նրանք չեն կարող կենդրոնանալ ոչ մէկի վրայ և դրա համար թէ գրելը, թէ ուղղագրութիւնը և թէ կարդալը տուժում է։ Այն ինչ՝ երբ նրանք սկզբում միայն ձեռագրի հետ գործ ունենան, այն ժամանակ մի բանով զբաղւելով, ամբողջ ուշադրութիւնը կենդրոնանում են ձեռագիր գրել-կարդալու վրայ, դրանով մանուկներն ոչ միայն լաւ գրելու վարժութիւն են ձեռք բերում, այլև գրածն արագ ըմբռնելու և կարդալու։

Այս հիման վրայ մեր դասագրքով մանուկները պէտք է գրելով կարդալ սովորեն և ձեռագիր տառերի վարժութիւնները վերջացնելուց յետոյ, նոր անցնեն տպագիր և սրանից յետոյ էլ գլխագրերը: Աւելորդ ենք համարում սրա վրայ երկար կանգնել, քանի որ էքսպէրիմենտալ մանկավարժութիւնը բազմաթիւ փորձերով այդ ցոյց է տուել:

II. Վերոյիշեալ բացատրութեան հիման վրայ՝ մեր ձեռագիր տառերը սովորական ընդունուած ձևից տարբերւում են. ա) մեր ընդունած ձեռագիր տառերը տպագրին շատ նման են, որպէս զի տպագրերն անցնելիս ոչ մի դժւարութիւն առաջ չգայ. միայն մի քանի ձեռագրեր (ձ, հ, ճ, ք,) տպագրից տարբերւում են, որոնց վարժութիւններին մենք շատ տեղ ենք տուել. բ) արդէն բնախօսական էքսպէրիմենտները ցոյց են տուել. որ երբ տառերը մազագծերով իրար հետ միացնում են. մանկան լաւ չկազմակերպւած և թոյլ մկանունքները բաւական արագ յոգնում են. այն ինչ վայրկենական ընդհատումներն որոշ հանգստութիւն տալով՝ յոգնածութիւն չեն առաջացնում: Միւս կողմից մազականներով վերջացած և կից գրութիւնը մանուկների դեռ անվարժ աչքի համար միանգամից ընդգրկելը և ըմբռնելը բաւական դժւար է: Փորձերը ցոյց են տուել, որ նոյն դժւարութիւններին են հանդիպում նաև հասակաւոր անգրագէտները: Այս հիման վրայ մենք խուսափել ենք տառերը մազագծերով վերջացնել և կից գրել: Մեր ընդունած գրութեան ձևը մանուկների տեսողութեան համար շատ պարզ է, միանգամից ըմբռնելի և կարդալու համար հեշտ. գ) մեր տառերի ձևն ապագայ գեղեցիկ և արագ գրութեան պարզ ձևն է: Այս գրութիւնով առաջնորդւողները յետագայում կարիք չեն ունենայ ոչ մի մազագիծ դուրս ձգելու, ինչպէս այդ տեղի է ունենում, երբ տառերը մազագծերով են վերջանում: Երբ մանուկների ձեռքերը գրութեան վարժւում են, երբ նրանք մտաւորապէս աւելի տոկուն են դառնում, այն ժամանակ նոր պէտք է անցնեն կից և արագ գրութեան, իսկ այսպիսի դէպքում, մեր գրութիւնով առաջնորդւողները աւելացնելու են միայն մազագծերը:

III. Ձեռագիր և տպագիր փոքր ու մեծ տառերը սովորեցնելիս աշխատել ենք պարզից բարդը, հեշտից դժւարն անցնել: Սրանով տառերի մասերը մէկը միւսին հիմք են ծառայել և գործը հեշտացրել: Երբեմն այդ սկզբունքից շեղւել ենք բովանդակութեան կապն ի նկատի ունենալով. մի բան՝ որ տառերի կապակցութեան և հեշտ սովորելուն պակաս չի նպաստում: Դարձեալ հեշտութեան համար փոքրատառերից բաժանել ենք ձեռագիր և տպագիր գլխատառերը և ընթերցարանում հետզհետէ, աստիճանական կարգով առաջ բերել: Սրանով մի կողմից փոքրատառերի անցնելը համեմատաբար դիւրացրել ենք, իսկ մեծատառերի անցնելը շատ թեթևացրել: Այս ձևով մանուկները մեծատառերը կը գրեն մինչև այն ժամանակ, երբ արդէն փոքրատառերն անցած են, որոնց շնորհիւ թէ նրանց աչքը և թէ ձեռքը վարժւած են.

IV Մանկագիտութիւնը (педологія) գրականապէս ապացուցել է, որ մանուկները նկարել սիրում են և իւրաքանչիւրն աշխատում է իր երևակայած իրը կամ կենդանին նկարել: Այս պատճառով՝ որպէս ձեռքի վարժութիւն եւ գրութեան նախապատրաստութիւն՝ ընտրել ենք պարզ գծերից կազմած շրջապատ առարկաների նկարները: Մանուկներն ուսուցչի առաջարկութեամբ պէտք



է գրքից կամ դասարանի գրատախտակից իրենց տետրակների վրայ արտանկարեն (տես I աստիճան): Նպատակայարմար է միանգամից գրչով, մի գծանի տետրակի վրայ նկարել, քան մատիտով մի քանի գծի կամ քառակուսիների վրայ:

Փորձերը ցոյց են տուել, որ 4, 3 կամ 2 գիծը ոչ միայն գրութեանը դիւրութիւն չեն պատճառում (ինչպէս կարծում են), այլ այդ գծերի մէջ տառերի տեղը որոշելը բաւական դժւարութիւն է առաջ բերում: Այդ գծերը մանուկների աչքերին և ձեռքերին ենթադրած համաչափութիւնը նոյնպէս չեն տալիս և նրանց ինքնուրոյն աշխատանքը կաշկանդում, կապում են: Այսպէս երբ մանուկները 4 գծից անցնում են մէկին, նրանք աւելի դժւարութիւնների են պատահում, քան միանգամից մի գծի վրայ գրելիս: Մի գիծը տառերին ուղղութիւն է տալիս, իսկ նրանց համաչափութիւնը մանուկներն իրենք են կամաց կամաց ձեռք բերում և վարժւում: Այս ձևն առանց գծի ուղիղ եւ համաչափ գրութեան հասնելու ամենակարճ եւ դրական ճանապարհն է:

Գրութեան ձևն ուղղահայեաց ենք վերցրել, ի նկատի ունենալով հետևեալը. ա) մանուկներն ինքնուրոյն գրելիս աւելի ուղղահայեաց են գրում, քան թեք. իւրաքանչիւր դիտող սրանում կարող է փորձով համոզւել. բ) թեք գրութիւնն առողջապահական տեսակէտով վնասակար է, որովհետև նա պատճառում է ողնաշարի ծռութիւն, կրծքի, ստամոքսի ճնշումն և այլն: Այդ բաներն արդէն դպրոցական առողջապահութիւնն ու բնախօսութիւնը հաստատել են, այն ինչ ուղղահայեաց գրութիւնն այդ պակասութիւններից ազատ է. գ) Ընդունելով ուղղահայեաց գրութիւն, դասատուները պէտք է ի նկատի ունենան մանուկների առանձնայատկութիւնները. ոչ մի դէպքում չպէտք է ճնշեն նրանց ինքնուրոյն գրութեան ձևը, որը կարող է ընդունւածից թեթև շեղումներ ներկայացնել:

V. Ի՞նչպէս սկսել մեր դասագրքով պարապել: Առաջին օրերում պէտք է կարճ խօսակցութիւն ունենալ դասարանի և առարկաների մասին, ապա զրուցատրութեան նիւթ դարձնել մեր դասագրքի «Ջանկլօ-Պանկլօ». «Պոչատ կաչաղակ», «Մկնիկ ալան», «Երեք թիթեռնիկ», «Սարեակի գանգատը», «Մանուկներն անտառում» յօդւածները:*)

Որպէս զի դասերը միակողմանի և ձանձրալի չլինեն և միաժամանակ մանուկները գրութեան մէջ վարժւեն, պէտք է իւրաքանչիւր դասում երկու տեսակ զբաղմունք լինի. մի մասը բանաւոր, միւսը գրաւոր: Այս կերպ որոշ ժամանակ պատմութիւններ և գրաւոր վարժութիւններ անցնելուց յետոյ՝ պատմութիւնների տեղ՝ այժմ դասերի մի մասը տրւելու է վերլուծական և համադրական վարժութիւններին, այսինքն իրենց անցած հէքիաթները, պատմութիւնները կամ ոտանաւորները վերլուծել խօսքերի (նախադասութիւնների), բառերի, վանկերի (կտոր) և հնչիւնների (երկար և կարճ ձայների), ապա հնչիւնները համադրելով՝ կազմել վանկեր, բառեր և խօսքեր. իսկ դասերի միւս մասը նւիրել գրաւոր վարժութիւնների շարունա-

*) Աշնան, ձմրան և գարնան յօդւածները պատմելիս անհրաժեշտ է դրանց մասին շօշափելի գաղափարներ տալ, դրա համար պէտք է մանուկներին դասարանից դուրս տանել և ամէն ինչ գործնականապէս ցոյց տալ: Սրանով նրանք զննողական պարզ գաղափար կունենան և յօդւածներն անցնելիս նրանց վրայ երկար կանգնելու առանձին կարիք չի լինի

կութեանը։ Այսպէս ուրեմն բանաւոր նախապատրաստութեան հետ զուգըն-թացաբար առաջ է գնում գրաւորը և բանաւորի հետ միասին կը վերջանան գրաւոր նախավարժութիւնները՝ տառերի հիմնական էլէմէնտների հետ։ Այդ էլէմէնտներով կարելի է բոլոր տառերը կազմել։

VI. Այս բոլորից յետոյ բանալ գրքի 3-րդ երեսը. այստեղ նկարած է մի սենեակ. նրա մէջ կայ բազմոց, սեղան, վառարան, փնջով ծա-ղիկ, ժամացոյց, պատկեր և այլն։ մանուկներն ընտանիքի անդամների ա-նունններն են տալիս. դրա համար ուսուցչի հարցերին պէտք է պատասխա-նեն, որ մայրիկը հաց է կտրում, Արփիկը նկարել է ու. Խաչիկը կարմիր ծուն ծնո-քին ուրախ կանգնած է. Էմինը նստած ընկոյզ է կոտրում, ատոր կարում է, Վանին պապի համար կարդում է, պապը լսում է, Նունիկը տիկնիկ է խաղում, պատից կախած է ժամացոյց, պատկեր—պատկերի վրայ նկարած է սար, առաստաղից կախած է լամպա, սեղանի վրայ կայ մի փունջ ծաղիկ, ցերեկ է հայրը տանը չէ։

Այս ամենը մանուկները պէտք է պատկերին նայելով լաւ պատմել իմանան, որովհետև սրանից էլ օրինակելի նախադասութիւններ (խօսք) և բառեր են ընտրուած։

Գրքի 11-րդ երեսում կայ երկրորդ ընդհանուր պատկեր «Աշա-կերտները դպրոցի պարտէզում խաղալիս», սա նոյնպէս լաւ ծա-նօթ է երեխաներին, ինչպէս և ընտանիքի պատկերը։ Ահա այդ պատկերը նախապէս աշակերտները պէտք է ուսուցչի ղեկավարութեամբ լաւ պատմել իմանան, ինչպէս օրինակ—ա) Աշակերտները դպրոցի պարտէզում խաղում են. բ) Դպրոցի պարտէզը մեծ է, գ) Թամարի աչքերը կապած են, մանուկ-ները աչքակապուկի են խաղում. դ) Նւայի գնդակն ընկել է ծառի վրայ, Նւան լալիս է. ե) Վարժապետի կարգադրութեամբ Օնիկը բարձրանում է ծառը. զ) Անվախ Օնիկը ոտները պինդ դրած՝ զգուշութեամբ բարձրանում է. է) Գուրգէնը կանգնած նայում է Օնիկին։

Այս բոլորը պատմելուց յետոյ աշակերտները միւս երեսներում տես-նում են նոյն պատկերի մասերը մեծ գիրքով նկարած, որով խսկոյն վեր-արտադրում են, թէ ով ինչ է անում և դուրս են բերում օրինակելի բա-ռեր. այսպէս օրինակ, պարտէզ բառից՝ զ. Թամարից՝ Թ. Նւայից՝ Ն. Օնի-կից՝ օ. Ոտից՝ ո. և այլն։

Երկրորդ նորութիւն. 10, 27 և 39-րդ երեսներում դրուած են «կրկնո-ղական պատկերներ անցած տառերի սահմանում»։

Աշակերտները որոշ տառեր անցնելուց յետոյ ուսուցչի ղեկավարու-թեամբ պէտք է դիտեն այդ պատկերները և պատմեն։ Այսպէս օրինակ, I. պատկերին նայելով կը պատմեն նրանք՝ ա) Աքաղաղը կանչում է կու-կու-լի-կու. բ) Կատուն մլաւում է. գ) Վանին կարդում է, պապը լսում է. դ) Արամը գրել է ի. ե) Արամը լալիս է. զ) Արամը նկարել է տուն. է) Պատ-կերի վրայ նկարած է սար։

Առաջին պատկերից գրում են կու կու լի կու, կրկնւում է կ տառը, կատուն մլաւում է, գրում են մլաւում է, կրկնւում է մ, ւ տառերը. Արա-մը գրել է ի, կրկնւում է ի. գրում են լալիս է, կրկնւում է լ ի. գրում են տուն, կրկնւում է ն, տ տառերը. գրում են պապը, կրկնւում է պ, ը. գրում են սար, կրկնւում է ս, ր։







VII. Այսպէս էլ նախ պատմում և ապա գրում են II. պատկերի հե-
տևեալ բառերը.—սագը կանչում է ղա, ղա, ղ տառ. բ) տղան քշում է բա-
ղիկին, բ տառ. վ) շունը հաչում է, շ տառ, դ) ոչխարը մայում է, ո, չ
տառեր. ե) կատուն խաղում է գնդակի հետ, գրում են խաղում է գնդակ,
խ, գ տառեր. զ) Ա՜յ, ա՜յ, ես վայր ընկայ, ասում է Զաւէնը, գրում են
ա՜յ, ա՜յ, կրկնւում է ա՜յ. է) Զաւէնը քնել է, ք տառ. ը) Զաւէն, ես եմ
նկարել այս պատկերը, գրում են Զաւէն և ես, զ, ե տառեր. թ) դու ես
նկարել այդ պատկերը, գրում են դու և այդ, կրկնւում է դ տառը. ժ) Նը-
կարած է ցորենի հասկ, գրում են ցորեն, ց տառ. ժա) Թորոսիկը քնել է
օրօրոցում, գրում են Թորոսիկ ու օրօրոց, թ, օ տառեր։
VIII. Ամեն կերպ աշխատել ենք խուսափել օրինակելի բառերի համար
ընտրել զանազան կենդանիների, գործիքների, և այլ առարկաների անուն-
ներ։ Որանցից շատերը մանուկներին կամ անծանօթ են և բացառութիւն-
ների կարօտ և կամ առարկաների անունները գաւառաբարբառներում տար-
բեր լինելու պատճառով՝ նորութիւն են ներկայանում. իսկ անծանօթ կամ
նոր սովորած բառի հետ կապել մի նոր բառ՝ դա շատ դժւար կը լինի։
Այստեղ մանուկները երկու դժւար գործ պէտք է կատարեն. Նախ, անծա-
նօթ բառի նշանակութիւնը պէտք է հասկնան, յիշողութեան մէջ պահեն և
ապա սրա հետ պէտք է մի նոր տառ կապեն. իսկ եթէ օրինակելի բը
ծանօթ է, պէտք է աշխատեն գրական լեզւով գործածւող նոր անունը միտ-
քը պահել և դրա հետ կապել նոր սովորելիք տառը։
Երկու դէպքումն էլ մանկան ուղեղի համար ծանրաբեռնութիւն է ա-
ռաջ գալիս. որովհետև բազմաթիւ անծանօթ բառեր, առարկաներ և տառեր
նրա յիշողութեան մէջ կուտակւելով, բնականաբար նա պէտք է ձանձ-
րանայ, թուլանայ նրա յիշողութիւնը, դրանցից շատերը նսեմանան և մո-
ռացւեն։ Այսպիսի երևոյթների առաջն առնելու համար մնում է կրկնել,
միշտ կրկնել, որ նրանք յիշեն. սրանով էլ շատ անգամ մանուկները անգիր
են անում, առանց տառը լաւ ճանաչելու և իրը հասկանալու։ Ուրիշ պատ-
ճառների հետ միասին պէտք է նաև սրան վերագրել այն երևոյթը, որ բո-
լոր այբուբենն անցնելուց յետոյ շատերը այս կամ այն տառը մոռացած են
լինում և կամ չեն կարողանում գրել
Այս հիման վրայ, մեր դասագրքում օրինակելի բառերի մեծ մասը
մանկան սովորած ընտանիքի և աշակերտները դպրոցի բակում պատկերնե-
րից են վեր առած, մի մասն էլ մանկան շատ ծանօթ շրջապատից. որոշ
պատկերները տարբեր ձևերով կրկնւում են, որոնցից օրինակելի բառեր են
դուրս բերում. այսպէս ուրեմն կապակցաբար առաջ գնալով թէ անցած
տառերն են վերանորոգւում և թէ նորերն աւելի լաւ են կապւում ու տպա-
ւորւում։ Ուրեմն մեր դասագրքով նոր սովորելիք տառերը ոչ թէ հատ հատ
խօսքերի հետ են կապւած մնում, այլ իրենց ծանօթ իրերի և երևոյթների
հետ։*)

*) Պատկերների տակ տպւած նախադասութիւնները ուսուցչի համար են։ Ուստի օրի-
նակելի բառն անցնելուց առաջ՝ դասատուն պէտք է խօսակցութեան նիւթ դարձնէ պատկե-
րը և դրանից երեխաները պէտք դուրս բերեն պատկերի էութիւնն արտայայտող նախադա-
սութիւնը. այնուհետև մանուկների ուշադրութիւնը պէտք է հրաւիրէ օրինակելի բառի վրայ,
որի օգնութեամբ սովորելու են նոր տառը։

IX. *Սկզբնական վարժութիւնների մէջ խուսափել ենք այն բառերից, որոնց մէջ երկու անգամ աւել բաղաձայններ միասին կան, որպէս զի բառերը հեշտ կարդացեն և «ը» տառի գործածութիւնը բաղաձայների մէջ շուտ առաջ չգայ. «ը» տառով վանկերը յետաձգած է մինչև V աստիճանը, երբ մանուկներն արդէն բաւական վարժւած են կարդալու մէջ. եթէ նախապատրաստական վարժութիւնները լաւ են տարւած, այն ժամանակ բառերի մէջ լսւող «ը» տառի հետ հեշտ կը լինի գործ ունենալ։*

*Վերջին ժամանակներում էքսպէրիմէնտալ մանկավարժութիւնը նորից գրական կերպով ցոյց տւեց, որ մանուկներին սկզբում գրել-կարդալ սովորեցնելու բնական և ուղիղ ճանապարհն է վերլուծական և համադրական մեթոդների միաւորութիւնը և ոչ թէ առանց դրան միանգամից կարդալուն անցնել։ Դրա համար մենք այդ ուղղութիւնը ոչ միայն բանաւոր նախապատրաստական վարժութիւնների մէջ ընդունել ենք, այլ և այդ գործադրել ենք մինչև* VI *աստիճանը։ Սրանով յետագայ բազմավանկ բառերի գրել-կարդալը դիւրանում է և մանուկն ինքնուրոյն կերպով հնարաւորութիւն կ'ունենայ դժւարացած դէպքերում բառերը վերլուծել, համադրել և կարդալ։ Այս կերպ կարդացած իւրաքանչիւր բառ կամ նախադասութիւն պէտք է բառ առ բառ կարդալ, ապա նոյնը պարզ և առոգանութեամբ։*

*Այբբենարանի և ընթերցարանի մէջ նպատակով խուսափել ենք առածներից և դա էլ նրա համար, որովհետև շատ առածների բացատրութիւնները բարդ են Ա. տարւայ մանուկների համար. միւս կողմից շատ անգամ մի գաւառի առածները միւսի համար անհասկանալի են։ Առածներ գործածելն այս տարում թողնւում է ուսուցչին, որ յարմարաւոր դէպքում օգտւի տեղական պարզ առածներից։*

*Օրինակելի տառերը դուրս ենք բերել բառերի առաջին տառից և միայն մի երկու դէպքում վերջին։ Մեր համոզմունքն է և փորձերն էլ այն են ցոյց տւել, որ առաջին տառն ամենից շատ լսւում է, ամենից պարզ ականջին զարկում, հետևապէս ամենից արագ ըմբռնելի է՝ քան վերջին, մանաւանդ միջից դուրս բերած տառերը։ Վերջին դէպքում ոչ միայն պարզութիւնը կորչում է, այլ և այդ տառի հնչիւնը հասկացնելու համար պէտք է կամ բաւական դժւարութիւնների մէջ ընկնել և վերլուծելով հասկացնել և կամ մանկավարժական միջոցները թողած՝ միանգամից տառի անունն ասել, այնպէս որ օրինակելի բառը միայն ձևի համար դրւած կը լինի։ Այստեղ ուսուցիչն իր միջոցներով է ճանապարհ բաց անում և ոչ թէ դասագիրքն է այդ տալիս։*

X. *Ուսուցիչներին և աշակերտներին դիւրութիւն տալու համար իւրաքանչիւր դասում մի տառ է նշանակւած և բոլոր անցած տառերն իւրաքանչիւր դասի մէջ կրկնւում են։*

*Փոքր իշատէ փորձւած դասատուն չի կարող չվկայել, որ մի ժամում մի տառից աւելի անկարելի է անցնել, նամանաւանդ սկզբնական շրջանում։ Մանուկները պէտք է այդ տառն ըմբռնեն, գրեն, վարժութիւնների մէջ գործադրեն և իւրացնեն, դրա համար էլ դժւար է մի տառից աւել անցնել։ Մի ժամում մի քանի տառ անցնելն ոչ միայն տանջանք է մանկան համար, այլ և նա անկարող է յիշողութեան մէջ պահել, ուսուցիչը ստիպւած կրկին*



*պէտք է դիմէ անցած վարժութիւններին։ Այս ամենը մենք անձնական փորձերից տեսել ենք, դրա համար էլ խուսափել ենք այդպիսի դժւարութիւններից և մեր կարծիքով հեշտացրած եւ մանկավարժական պահանջների համաձայն դասագիրք ենք առաջարկում։ Թէ որչափ ենք հասել մեր ցանկացած նպատակին, այդ բարեխիղճ գործադրողների փորձերն ու կարծիքները ցոյց կը տան, որոնց նկատողութիւնները սիրով ու շնորհակալութեամբ կընդունենք։ Դասընկերի այն ջերմ ընդունելութիւնը և տարածւելը, որ մեր դասատուների կողմից ընդունւեց, արդէն մեր ասածներին ապացոյց է։*

XI. *Կրկնողական պատկեր. նախ դիտում և ապա պատմում են. ա) Էշը զռում է, ո. բ) կովը բառաչում է, գրում են կով. գ) փոքրիկ տղան ձի է նստել, գրում են փոքրիկ և ձի, փ, ձ տառեր. դ) Ջաւիկը կերակրում է աղաւնիներին, գրում են Ջաւիկ, կրկնւում է ջ։ Բադը, ճուտիկները, աքաղաղը, հաւը և ծիտիկները վազում են կուտ ուտելու, գրում են՝ ճուտ, ծիտ, հաւ, կրկնւում են ճ, ծ, տ տառեր. ե) ժամացոյցը կախւած է պատից գրում են ժամացոյց, ժ, ոյ։*

*Թէև ամեն մի յօդւածում նոր տառ անցնելիս սովորած բոլոր տառերը՝ կրկնւում են, բայց և այնպէս կրկնողական պատկերներն աշակերտներին մի նորութիւն, մի թարմութիւն և գեղարւեստական ճաշակի զարգացում են տալիս. նրանք այժմ ոչ թէ միայն գրածը պէտք է կարդան, այլ և իրենց լաւ ծանօթ պատկերները պէտք է դիտողութեան նիւթ դարձնեն, նախադասութիւններ կազմեն, գրեն և կարդան։ Բնական է, որ այս երևոյթը պէտք է դիտողութիւնը զարգացնէ, հետաքրքրութիւն առաջ բերէ, որով մանուկները բոլոր անցածները մի տեսակ խաղ ու խնդումով կը կրկնեն։ Միւս կողմից կրկնողական պատկերները յետամնաց և թոյլ յիշողութիւն ունեցող աշակերտներին մի անգամ ևս առիթ կը տան կրկնելու, անցածները վերարտադրելու և պակասները լրացնելու։*

*Երրորդ, այս հրատարակութեան մէջ ոչ միայն այբբենարանի ձեռագրերից շատերը փոփոխութեան են ենթարկւած, այլ և ընթերցարանի բաժնում և ձեռագիր արտագրութեան յօդւածները շատացրած են։*

*Չորրորդ, տպագիր մասը ճոխացրած է տեսակ տեսակ զւարճալի մանրիկ ոտանաւորներով, յօդւածներով, ժողովրդական ասացւածքներով։ Իսկ յօդւածների մէջ որոշ փոփոխութիւն է մտցրած, որպէս զի տարւայ եղանակներին համապատասխան յօդւածները կարողանան ժամանակին անցնել և կենդանի կերպով դիտել։*

*Մանկավարժական որոշ պահանջների հիման վրայ՝ անցած նիւթն աւելի և կատարելապէս իւրացնելուն խիստ նպաստում է, երբ մանուկը նոյնը նկարում է, անցած նիւթը մօտօր շարժումների միջոցով իր հոգու մէջ կրկնելով՝ ամբողջացնում և լրիւ պատկեր է կազմում։*

*Այդ հիման վրայ Դասընկեր առաջին տարում (ինչպէս և Բ. և Գ. տարիներում) յօդւածների տակ դրւած են մանկանը լաւ ծանօթ անհրաժեշտ առարկաների պատկերները շատ պարզ գծերով։ Այդ պատկերները ոչ թէ արտանկարելու համար են, այլ նրանք պէտք է նպաստեն մի կողմից նիւթի վերարտադրութեանը, որ կրկնելով ու նկարելով մի ամբողջութիւն կազմեն մանկան հոգու մէջ. միւս կողմից նկարելիք իրերը լաւ դիտելուց*

յետոյ՝ պէտք է պատկերները համեմատեն իրականի հետ և յիշողութեամբ նկարեն։

Բնականաբար շրջապատ ընտանեկան կարասիները, մրգեր, կենդանիները իրենց պարզութեամբ ու աստիճանական զարգացմամբ մանկան համար խիստ հետաքրքիր նկարելու նիւթ կը դառնան և որոշ չափով շահեկան կը լինեն գծագրական նկարչութեանը։

XII. Մի երկու խօսք ևս, թէ մեր դասագրքի իւրաքանչիւր մասին քանի ժամ պէտք է նուիրել։ Հիմնւելով մեր փորձերի վրայ, կասենք. ա) մօտ 20 ժամ պէտք է տալ նախապատրաստական վարժութիւններին (զրուցատրութիւն, վերլուծութիւն և գրութիւն). բ) իւրաքանչիւր դասում մի տառ անցնելով, 40 վարժութիւններին պէտք է տալ 40 ժամ, իսկ նրանց վերաբերեալ յօդուածներին 15 և 5 դաս մանրատառ տպագրին, ընդամենը 80 դաս։ Ներկայ ծրագրի համաձայն շաբաթական 7 ժամ հաշուելով, մինչև Նոյեմբերի վերջը կանցնին բոլոր ձեռագիր և տպագիր տառերն իրենց վարժութիւններով։ Այսպէս աշնան վերջին մանուկները վերջացրած կը լինեն ոչ միայն բոլոր տառերն։ այլև աշնան մասին զննողական գաղափար կունենան և նրան վերաբերեալ պատմութիւններից մի քանիսը բանաւոր անցած կը լինեն։ Դեկտեմբերի դասերը պէտք է նուիրել աշնան շրջապատից վեր առած մի քանի յօդուածների ընթերցանութեան։ Յունվարից գլխաւոր կերպով պիտի սկսել ձմրան յօդուածները, գարնանը՝ գարնան յօդուածները. իսկ վերջերում գաղափար տալ ամառւայ մասին։

Կազմողներ

1616 թ. Ապրիլ

Երևան



# ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

## 1.

(երես 2)

Ա. սինեակ. Ուղղահայաց ու հորիզոնական գծեր ու նրանց միացումը.

Այս սինեակում (ինչպէս և հետևեալներում պատահող ձևերը նախ պէտք է գործնական կերպով հասկանալի դարձնել երեխաներին և ապա նկարել տալ, առաջարկելով.

Բռնեցէք ձեր քանոնները, մատիտները, գրչակոթերը ուղղահայեաց։

Ցոյց տւէք դասարանի մէջ ուղղահայեաց գծեր (սեղանի, լուսամուտի, պատի վրայ և այլն)։

Նկարեցէք ուղղահայեաց գծեր։

Բռնեցէք ձեր մատիտները, գրչակոթերը, մատները հորիզոնական ցոյց տւէք դասարանի մէջ նոյն տեսակ գծեր։

Նկարեցէք հորիզոնական գծեր, խաչ, գրատախտակ, լուսամուտ նըստարան, սեղան, կանգնած ու պառկած սանդուխք և պատ։

Բ. սինեակ. թ ե ք գ ծ ե ր.

Բռնեցէք ձեր մատիտները, քանոնները, գրչակոթերը թեք։

Նկարեցէք թեք գծեր՝ աջից դէպի ձախ, ձախից դէպի աջ՝ խաչ, աթոռ, աստղ, ծառ, ծաղկաման, նամակ, տնակ, քանոն։

Գ. սինեակ. կոր գծեր

Նկարեցէք օղակ, անիւ, կեռաս, խնձոր, կանգնեցրած ձու։

Դ. սինեակ. տառերի հիմնական գծերը.

Նկարեցէք կարթ՝ միսը վրան, միայն կարթ՝ փոքր ու մեծ, երկու գըլխանի կարթ։

Միացրէք մի կարթը մէկ ուղղահայեացի հետ։

» ուղղահայեացը՝ վերևից կարթ ունեցող գծին։

» մի կարթ ուղղահայեաց գծի և վերևից կարթ ունեցող մէկ ուրիշ գծի հետ։

Նկարեցէք մի ուղղահայեաց և ներքևից սրան միացնող մէկ հորիզոնական գիծ։

Նկարեցէք միևնոյնը աւելի մեծ։

» ուղղահայեաց գիծ՝ ներքևը ձւաձև։

» ձեռնափայտ։

## II.

Զրուցատրութեան նիւթ է դառնալու 3-րդ երեսում եղած ընդհանուր պատկերը այն ձևով, ինչ ձևով վերևում նկարագրեցի։

## III.

Մէկ և երկու վանկանի բառերը գրել-կարդալ։

## IV.

Երկու և երեք վանկանի բառերը գրել կարդալ։

V.

Երկու բաղաձայնը վանկել «ը» տառով՝ առանց «ը»-ն գրելու։

VI.

Բազմավանկ բառերը և վանկերի չբաժանուած յօդուածներ։

VII.

Տպագիր փոքրատառեր։

VIII.

Ձեռագիր և տպագիր մեծատառեր։

IX.

Ընդհանուր յօդուածներ։

---

«վ» և «ւ» (տես երես 7) իբրև նման հնչիւններ պիտի անցնել միատեղ և ասել մեծ «վ» և փոքր «ւ». սրանց տարբեր գործածութիւնը երեխաները պիտի սովորեն վարժութիւններով։

«յ»-ն բառերի վերջում (տես երես 36 և 37) չկարդալու համար առանձին ուշադրութիւն պիտի դարձնէ դասատուն և ըմբռնել տայ դարձեալ վարժութիւններով։

Դասագրքի մէջ մտցրել ենք մի քանի օտարազգի բառեր, որոնք կամ շատ ընդհանրացած են և կամ յատուկ են մանկական լեզուին։



# ՑԱՆԿ

---

ՆԱԽԱԲԱՆ

## ԱՅԲԲԵՆԱՐԱՆ


Գրութեան նախավարժութիւն 2
Ընդհանուր պատկեր Ա. . 3
Կրկնողական պատկերներ անցած տառերի սահմանում Ա. 10
Ընդհանուր պատկեր Բ. . 11
1 Վարսիկի կատուն . . 13
2 Արև, արև, ոտան. ժողովրդ. (Թ. Հայկ.) . . . 14
3 Օրօր, ոտ. . . . 15
4 Սրտոտ գորտը . . . 16
5 Դաղան մանկիկ ոտ. ժողովրդ. (Ազգ. Հ.) . . . 17
6 Իմաստուն կովը . . . 17
7 Թօն տրաւ, ոտան. ժողովրդ. 19
8 Ցոլակի ակնոցը . . . 20
9 Ես ունիմ . . . . 21
10 Աքլոր . . . . 23
11 Սիրելի Շուշիկ . . . 24
12 Մէկը գալիս է մօլլի մօտ . 26
Կրկնողական պատկեր անցած տառերի սահմանում Բ. . 27
13 Ջուալը լիքը ցորեն . . 28
14 Հորոսի մանգաղը, ժողովրդ. (Հոբոսից) . . . 29
15 Աքլոր, ոտ. ժողովրդ. (Ազգ. Հ.) 30
16 Ծիտիկ, եմ ժողովրդ. . 31
17 Ծոյլ Թեանը, ժողովրդ. . 33
18 Արջը և ժօրժիկը. . . 33
19 Կռունկներ, ոտ. ժողովրդ. . 34
20 Բարի լոյս, Գաբօ, ժողովրդ. 35
21 Փիսիկ, ոտ. ժողով. (Ազգ Հ.) 35
22 Սալիկ Յակոբը, ժողովրդ. . 36
23 Երկու ձի . . . . 38
Կրկնողական պատկեր անցած տառերի սահմանում Գ. . 39
24 Կու-կու-լի-կու. ոտան. . 40
25 Վարդանը և Ոսկանը . . 41
26 Խաղ. . . . . 41
27 Բօքը. . . . . 42
28 Ջու, ջու . . . . 42
29 Մատների վէճը, ոտ. ժողովրդ. 43
30 Աղան և գիւղացին . . 43
31 Պատիկ հէքեաթ, ոտ. ժողովրդ. 44


## ԸՆԹԵՐՑԱՐԱՆ


I.

1 Գիրք, ոտան. . . . 45
2 Ո՞վ է եփում. . . . 46
3 Թուզանը . . . . 46
4 Խոզիկը . . . . 46

II.

5 Աշուն . . . . 47
6 Աշուն, ոտ. Պ. Մոճոռեան . 48
7 Սուրիկի փիսիկը. . . 50
8 Նոյեմբերին, ոտ. ձեռագիր Հ. Հայրապետեան. . . 50

III.

9 Ձմեռ . . . . 51
10 Աշնան տերևը, ոտ. ձեռագիր Հ. Հայրապետեան . . 52
11 Մատների խաղը, ժողովրդ. . 52
12 Նոր տարի, ոտան. Գ. Բաթ. 53
13 Ձին և ճնճղուկը, ոտան. . 54
14 Ծոյլ Խաչիկը . . . 5
15 Ձմեռուայ գալը, ոտ. . . 56
16 Ձմեռուայ զւարճութիւն. . 57
17 Ձնէ մարդ, ոտան. . . 59

IV.

18 Գարուն . . . . 60
19 Գարնան գալը, ոտան. . 60
20 Հրաւէր գարնան, ոտանաւոր, Պ. Մոճոռեան . . . 61

21 Արտուտիկ, ոտան. ձեռագիր
Հ. Հայրապետեան . . 61
22 Կլորիկ, Թմբլիկ, ոտան. . 62
23 Բալենու ճիւղերը. . . 62
24 Ծիտն ու տղան, ոտան. . 63
25 Բկլիկ Պետիկը . . . 63
29 Էգ մի կարծիր . . . 63
27 Սերմիկը, ոտ. . . . 64
28 Մէկ երկու . . . 64
29 Պարտէզում . . . 65
30 Ծիտիկ, ոտան. . . . 66
31 Մկան զարմանքը. . . 66
32 Նազիկ տատի, խաղը ժողովրդ. 67
33 Էս ես եմ, բա էն ով է. . 67
34 Մայիսին, ոտ. Ե. Բարայեան. 69
35 Լաւ ընկեր, ոտ. ձեռագիր, Հ.
Հայրապետեան. . . 69
36 Երեք Թիթեռնիկ. . . 69
37 Խատուտիկ, պուտպուտիկ, ձեռ. 72
38 Երկու քաջեր, ոտ. . . 72
39 Արտուտի բունը . . . 73
40 Աղան ու մշակը . . . 74
41 Ծիծեռնակի բունը, փոխադր. 75
42 Ծիծեռնակ, ոտան. ձեռագիր,
Դողոխեան . . . 76
43 Ծիտիկները, ոտ. . . 76
44 Ջանկլօ Պանկլօ, ժողովրդ. մի
մասը ձեռագիր (Հայկ. կենդ.
վէպեր . . . , 77
45 Մկնիկ աղան, Հ. Հայրապետ. 80
46 Փոքրիկը, ոտ. . . . 82
47 Կառապան, ոտան. . . 82
48 Հպարտ աքլորը, ոտան. . 83
49 Պոչատ կաչաղակը, ժողովրդ.
(Վան. սազ) . . . 84

V.

50 Ամառ . . . . 86
51 Ամառ, ոտ. մի մասը ձեռագիր,
Մ. Մամիկոնեան . . 86
52 Զմրուխտ եզնակ, ոտ. Յարութ.
Թումանեան . . . 87
53 Արագիլի սէրը . . . 87
54 Զղջիկ, ժողովրդ. (Հայկ, կենդ.
վէպեր) . . . . 88
55 Պստիկն ու լխտիկը, ոտ. Յար.
Թումանեան . . . 89
56 Երեխաներն անտառում. . 90

Հանելուկներ

1 (Ուլիկ ուլիկ). . Նուռ 6
2 . . . . Գիրք 49
3 . . . . Մոմ 50
4 . . . . Զղջիկ 89
Համառօտ բացատրութիւն գոր-
ծածողներին . . . 92

П4-295а

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

# ԴԱՍԸՆԿԵՐ

| | |
|---|---|
| Առաջին տարի . . . . . . | 50 կ. |
| Երկրորդ տարի . . . . . . | 60 կ. |
| Երրորդ տարի . . . . . . | 80 կ. |
| Չորրորդ տարի . . . . . . | 1 ր |

Պատրաստ է, շուտով տպագրութեան կը յանձնուի Դասընկեր Ե. և Զ. տարի։

Դիմել՝ Թիֆլիս Գուտենբերգ և Գիր գրավաճառանոցին։

Երևան՝ Արարատ և Յովհաննիսեան գրախանութներին։

Կարմողներին՝ Երևանի Թեմական դպրանոց։

Գումարով գնողներին կը լինի զեղչ։

0

2013

4150

ՀՀ Ազգային գրադարան

NL0060820

Арм.
4-295а